

ՄՈՍԿՈՒՄՅՈՒ ՄԵՋ ՌՈՒՍ-ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մոսկուայի մեջ Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Պասասա՛ Սապպադ Ռուսիոյ նախագահին Ափրիկէի եւ Միջին Արեւելքի հարցերու անձնական ներկայացուցիչ Միքայէլ Պոկտանովի եւ Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Ֆերշենէնի հետ խորհրդակցեցաւ տարածաշրջանի վերջին զարգացումներուն, Պաղեստինի ժողովուրդին դէմ իսրայէլեան գրոհին եւ լիբանանեան ու սուրիական հողերու վրայ իրարայաջորդ յարձակումներուն շուրջ:



Սուրիոյ արտաքին գործոց նախարարի օգնական Այման Սուսանի եւ Մոսկուայի մեջ Սուրիոյ դեսպան դոկտ. Պաշարալ ալ-ճաաֆարիի ներկայութեան տեղի ունեցած հանդիպումին, կողմերը խորհրդակցեցան մէկուկէս ամիսէ ի վեր Պաղեստինի ժողովուրդին ուղղուած Իսրայէլի անսահման թշնամանքին:

Սապպադ շեշտեց Իսրայէլի յարձակումներու դադրեցումն ու Պաղեստինի ժողովուրդին մարդասիրական օգնութիւններ հասցնելու անհրաժեշտութիւնը, մերժելով պաղեստինեան դատը վերջնականապէս թաղելու իսրայէլեան փորձերը:

Յանդիպումի մասնակիցները կարեւոր համարեցին ՄԱԿ-ի եւ միջազգային այլ շրջանակներու մեջ Սուրիոյ եւ Ռուսիոյ գործակցութիւնը: Անոնք վերահաստատեցին անհրաժեշտութեան դէմ պայքարին մեջ միասնական աշխատանքին արդիւնաւետութիւնը, շեշտելով Սուրիոյ գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման, ինչպէս նաեւ սուրիական հողերէն օտար, ապօրինի ուժերու դուրս բերման կարեւորութիւնը:

ԻՍՐԱՅԷԼ ԵՐԿՐՈՐԴ ԱՆՊԱՏ ԸԼԼԱՆՈՎ ԿԸ ԽՍՆՏԷ ԶԻՆԱՂԱԳԱՐԸ

29 Նոյեմբերին, Կազգայի մեջ զինադադարի ժամանակաւոր համաձայնութեան վեցերորդ օրը, իսրայէլեան ուժեր երկրորդ անգամ խախտելով զինադադարը կրակ բացին պաղեստինցի քաղաքացիներու վրայ, երբ անոնք կը փորձէին վերադառնալ Կազգայի հարաւարեւմտեան բաժնի թէլ Զաուա շրջան՝ իրենց վնասուած բնակարաններուն վիճակը ստուգելու եւ անհրաժեշտ իրեր վերցնելու: Կրակոցներուն հետեւանքով պաղեստինցի մը վիրաւորուեցաւ:



ԵՐԵՒԱՆ. ԱՏՐՊԷՅՃԱՆ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿԷ ԱՐԳԻԼԵԼ ԱՐՃԱՆ ՍՈՍԲԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԻԻՆԵՍՔՕ-Ի ՆԱԽԱՃԵՆՆՈՒԹԻՒՆԸ

«Սփութիք Արմէնիա»-ի հարցումին պատասխանելով՝ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտնեց, որ Ատրպէյճան կը շարունակէ արգիլել ԻԻՆԵՍՔՕ-ի առաքելութիւնը Լեռնային Ղարաբաղ ուղարկելու նախաձեռնութիւնը:

Նախարարութիւնը դիտել տուաւ, որ 2020-ին, Արցախի վրայ Ատրպէյճանի լայնածաւալ յարձակումէն ի վեր, Երեւան միջազգային մասնագիտացած կազմակերպութիւններուն, որոնց կարգին՝ ԻԻՆԵՍՔՕ-ի մօտ, մասնաւոր կը բարձրացնէ Արցախի մեջ հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութեան պաշտպանութեան հարցը:



Նոյեմբեր 2020-էն ի վեր, Հայաստան սատարած է ԻԻՆԵՍՔՕ-ի ընդհանուր տնօրէնին՝ Արցախ փորձագիտական խումբ ուղարկելու նախաձեռնութեան եւ ներգրաւուած է կարելի եղածին չափ սեղմ ժամկետներու մեջ առաքելութեան կազմակերպման գործընթացին մեջ:

«Սակայն Ատրպէյճան շարունակաբար կ'արգիլէ ԻԻՆԵՍՔՕ-ի առաքելութիւն Լ Ղ ուղարկելու նախաձեռնութիւնը: Ատրպէյճանի ապակառուցողական կեցուածքը ԻԻՆԵՍՔՕ-ի փորձագիտական առաքելութեան հարցով կը հակասէ մշակութային ժառանգութեան պաշտպանութեան ոլորտին մեջ գործող բոլոր միջազգային համաձայնագրերու, այդ կարգին՝ Զինեալ բախումներու պարագային մշակութային արժէքներու պաշտպանութեան մասին 1954 թուականի համաձայնագրի դրոյթներուն», կը յայտնէ Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

Բացի ատկէ, լուսարձակի տակ կը բերուի այն փաստը, որ Պաքուի դիրքորոշումը կը խախտէ ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային դատարանի 7 Դեկտեմբեր 2021-ի որոշումը, որ Ատրպէյճանը կը պարտաւորեցնէ՝ «ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցներուն՝ կանխելու եւ պատժելու հայկական մշակութային ժառանգութեան վանդալութեան ու պղծման գործողութիւնները, ներառեալ՝ եկեղեցիներու եւ այլ պաշտամունքի վայրերու, յուշարձաններու, տեսարժան վայրերու, գերեզմաններու եւ արուեստի գործերու»:

Հ.Ե.Ս.

ԿԱՍՔԻ ԿՈՐՐՈՎՈՎ, ԲԱԶՈՒԿԻ ՈՒԺՈՎ

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան ժամը 8:00-ին,
«Գ. ԵՍԱՅԵԱՆ» սրահէն ներս, Սուլէյմանիէ, Հալէպ:

1890-2023

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐ ՆԵՐԱՐԿԵԼ ՆԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԱՐԵԱՆ ՄԷՋ (Համազգայինի 95-ամեակին առիթով)

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության հիմնադիրները ունեցած են հայ գիրն ու գրականությունը, հայ մշակույթը սերունդներու կրթության հիմնական ուղեցույցը դարձնելու, անոնց ներշնչման աղբյուրը դարձնելու տեսլական:

Անոնք հիմնած են Համազգայինը եւ աստիճանաբար ծաւալուն դարձուցած անոր գործունեությունը, որպեսզի Ցեղասպանության հետեւանքով ցրուցան դարձած հայությունը խմբուի նախ իր լեզուին ու դպրության, ապա նաեւ իր մշակութային արժեքներուն շուրջ, պահպանել իր ազգային դիմագիծը ու հաղորդակից դառնայ մեր հոգեմտաւոր ժառանգութեան: Առանց ոգեղեն այդ սնունդին կարելի պիտի չըլլար հայության դիմագիծը պահել օտար միջավայրերու մէջ:

Այդպէս ալ եղաւ. հիմնելով դպրոց, հայագիտական հիմնարկ, թատրոն, պարախումբ, երգչախումբ, արուեստի կեդրոններ, տպարան, հրատարակչատուն ու աշխատանքի հրաւիրելով մասնագէտներ, մտաւորականներ, Համազգայինի հիմնադիրները յաջողեցան ուղղություն տալ, դիմագիծ տալ սփիւռքահայ կեանքին:

Թէեւ Համազգայինի հիմնադրութեան օրերուն մեր ժողովուրդը կ'ապրէր ճգնաժամային տարիներ... ցեղասպանություն, հայրենիքի անկախութեան կորուստ, սակայն կարելի եղաւ քայլ առ քայլ յաղթահարել այդ դժուարությունները, գոյատեւման ու յառաջընթացի ելքեր գտնել:

Այսօր եւս մեր ազգն ու հայրենիքը կը դիմագրաւեն ճակատագրական օրեր. պատերազմ, Արցախի ու անոր հազարամեայ մշակույթի կորուստ, սփիւռքահայ գաղութներու նօսրացում եւ մաշում, համաշխարհայնացման ալիք, ազգային արժեքներու խեղաթիւրում եւ այլն:

Այս թոհուրոհին մէջ, սակայն, Համազգայինը կրնայ ըլլալ լուսաւոր փարոս, եթէ լարուած ուժերով աշխատի մշակութային մեր դիմագիծի պահպանման համար, իր աշխատանքի շրջանակին մէջ պահէ հայ մտաւորականներ, հայագէտներ, արուեստագէտներ, տնտեսական բազում դժուարություններ յաղթահարելով պահպանել մասնագիտական մօտեցումը, նիւթական միջոցներ չխնայելով նախանձախնդիր ըլլալ որակի պահպանման մէջ:

Հայ գիրն ու գրականությունը, երգն ու պարը, թատրոնը լոկ ճաշակ ձեւաւորող ազդակներ չեն: Անոնք մեր ազգին պատմությունը, կենսակերպը, միտքը, թռիչքը, ըմբռնումներն ու գեղարուեստական ճաշակը արտացոլացնող հայելիներ են: Անոնց մէջ մենք մեզ կը տեսնենք եթէ խորանանք, ըմբռնենք ու փորձենք մեր կեանքին բերել, մեր մտածելակերպին հաղորդակից դարձնել զանոնք այլազան միջոցներով:

Մշակույթին ծանօթանալը, անոր ժառանգորդը ըլլալը միայն ձեռնարկներու ներկայ ըլլալով, կամ բեմերէն պատգամներ հընչեցնելով չեն ըլլար, այլ՝ մշակույթին հաղորդակից դառնալով, զայն մեր աւերակային մէկ մասը դարձնելով, հայկական արուեստին աղերսուելով կրնան ըլլալ:

Ու որքան ալ արտաքին ազդակները նուազեցնեն մեր երիտասարդներու հետաքրքրությունը հանդէպ հայ մշակույթին, հայ գիրն ու գրականութեան, մշակույթը մեր հաւաքականութեան սեփականությունը դարձնելու ճիգով կարելի է ստեղծել մթնոլորտն ու գրգռել հետաքրքրությունը՝ եթէ տազնապողներ ու այդ տազնապող հաւաքական գործի վերածողներ ըլլան:

Համազգայինը հաւաքական նման աշխատանքի միջոցներն ու մթնոլորտը ստեղծելով, հայ մտաւորականութիւնն ու արուեստագէտները իր շուրջ պահելով, մանուկին ձեռքը հայերէն գիրք պիտի տայ, հայկական երաժշտությունը անոր աւերակային մէջ հնչել պիտի պահէ, զինք թատրոն պիտի առաջնորդէ, երիտասարդին հայկական պարին կշռոյթն ու հմայքը համատեսել պիտի տայ, հայագիտական կրթությունը անոր հետաքրքրութեան ծիրին մէջ պահելու ձեւեր պիտի որոնէ ու կաթիլ-կաթիլ անոր արեան մէջ պիտի ներարկէ հայկականությունը:

Մշակույթը մեր գոյատեւելու գրաւականն է նաեւ: Առանց մշակույթի մենք կը վերածուինք անդիմագիծ հաւաքականութեան:

«Գ.»


-ՄԱԿ-ի անդամ պետություններուն մեծամասնությունը քուէարկեց ի նպաստ բանաձեւի մը, որ կը պահանջէ Իսրայէլէն սուրիական գրաւուած Կոլանէն դուրս գալ մինչեւ 4 Յունիս 1967-ի գիծը, գործադրելով այս հարցին առնչուող Անվտանգութեան Խորհուրդին որոշումները:



Անդամները մեծամասնութեամբ, 91 պետություն, քուէարկեցին ի նպաստ «Սուրիական Կոլան» բանաձեւին եւ մերժեցին իսրայէլեան ուժերուն գոյությունը Կոլանի մէջ, մինչ 62 պետություն չընդունեց քուէարկել:

Շար. 19 9

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դրկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ հանդիպում ունեցաւ Պաղեստինի ազատագրութեան ժողովրդական խորհուրդի քարտուղար դրկտ. Թալալ Նաճիի եւ անոր ընկերակցող պատուիրականութեան հետ:



Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան պաղեստինեան հարցի վերջին զարգացումներուն շուրջ:

Իր կարգին, նախարար Մըքտատ շեշտեց, որ Սուրիան սկզբունքային զօրակցութիւն կը յայտնէ Պաղեստինեան Դատին, անդրադառնալով Կազգայի ժողովուրդին անսկուն պայքարին: Ան շեշտեց իսրայէլեան գրոհին դադրեցման անհրաժեշտութիւնը, որ 54 օրէ ի վեր Կազգայի մանուկները կը սպաննէ ամենայն վայրագութեամբ եւ կը քանդէ հիւանդանոցներն ու քաղաքային հաստատութիւնները:

Շար. 19 9

-2 ինտուրական աղբիւր մը յայտնեց, որ այսօր յետմիջօրէին, Սուրիոյ ժամով 6:50-ին, Իսրայէլ թշնամական յարձակումով մը կրկին հրթիռակոծած է Դամասկոսի միջազգային օդակայանը եւ Դամասկոսի արուարձանի կարգ մը կէտեր:



Աղբիւրին համաձայն, Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դնելով յարձակումին վար առած ու փճացուցած են հրթիռներուն մեծամասնությունը:

Արձանագրուած են նիւթական վնասներ, իսկ օդակայանը ծառայութեան դադրած է:

-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարությունը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ շեշտեց, որ սուրիական քաղաքային օդակայաններու դեմ իսրայէլեան իրարայաջորդ յարձակումները կը սպառնան տարածաշրջանի անվտանգութեան ու խաղաղութեան, կոչ ուղղելով ՄԱԿ-ին եւ Անվտանգութեան Խորհուրդին ամէն ջանք թափելու կասեցնելու այս յարձակումները:



Նախարարությունը ըսաւ. «Դամասկոսի Միջազգային օդակայանին եւ Դամասկոսի արուարձանի Շար. 19 9»

-Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարությունը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ՝ խստիւ դատապարտելով Դամասկոսի Միջազգային օդակայանին դեմ իսրայէլեան գրոհը, զգուշացնելով, որ նման յարձակումներ վտանգաւոր ազդեցութիւն կ'ունենան տարածաշրջանին վրայ:



Նախարարությունը ակեցցուց, որ սուրիական հողերուն վրայ իսրայէլեան իրարայաջորդ յարձակումները կը խախտեն Սուրիոյ պետութեան գերիշխանությունը եւ միջազգային օրէնքը:

Իր կարգին, Վենեզուելայի Արտաքին Գործոց Նախարարությունը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ եւս խստիւ դատապարտեց Դամասկոսի Միջազգային օդակայանին հրթիռակոծումը, յայտնելով, որ սոյն յարձակումը Միջին Արեւելքի մէջ քաղաքական եւ ռազմական լարուածու-

Շար. 19 9


Լուրեր Հայաշխարհին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍԵՆՏՐԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԻՋԵՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

25 Նոյեմբերին, Հայաստանի Հանրապետության և Սենտրալական Արաբիոյ թագավորության միջև ստորագրուեցաւ դիվանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւն մը:

Ստորագրութեան պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Ապու Տապիի մէջ՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Կարէն Գրիգորեանի եւ Սենտրալական Արաբիոյ դեսպան Սուլթան Կարէն Ապտալլա Անքարի կողմէ:

Երկու երկիրները հաստատեցին դիվանագիտական յարաբերութիւններ՝ առաջնորդուելով երկկողմ յարաբերութիւնները ամրապնդելու եւ համագործակցութեան ծիրը ընդլայնելու, միջազգային ապահովութեան եւ խաղաղութեան երաշխաւորման աջակցելու ձգտումով:



Դիվանագիտական յարաբերութիւններու հաստատման մասին փաստաթուղթը կ'արձանագրէ երկու երկիրներու փափաքը՝ «ամրապնդելու արդիւնաւետ համագործակցութեան կապերը քաղաքական, տնտեսական, ճարտարագիտական, գարգացման, առևտուրի եւ մշակութային ոլորտներուն մէջ՝ տարբեր բնագաւառներու մէջ ջերմ յարաբերութիւններու հաստատման երկուստեք ձգտումները իրականացնելու գծով»:

Յիշեցնենք, որ Սենտրալական Արաբիա կը հրաժարէր Հայաստանի հետ դիվանագիտական յարաբերութիւններ հաստատելէ Արցախի հակամարտութեան պատճառով: Ռիատ յայտարարած էր, որ Հայաստանի հետ դիվանագիտական յարաբերութիւններ պիտի չհաստատէ այնքան ատեն որ «Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը չէ վերականգնած»:

ԲԺԱՆԻԱ «ՓԱՇԻՆԵԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏՃԱՌՈՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՅԵՐԸ ԿՈՐՄՆՈՒՅԻՆ ԴԵՏԱԿԱՆՈՒԹՅԻՆԸ, ԽԱՆՏՈՒԹՅԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾԲԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԻՆԸ»

«Սփութեանը Աբխազիա»-ն կը հաղորդէ, որ Աբխազիոյ նախագահ Ասլան Բժանիան Վրաստանի տարածքային ամբողջականութեան աջակցելու մասին Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնը Աբխազիոյ գերիշխանութեան հակասող փաստ նկատած է եւ կոչ ուղղած հրաժարելու վրացամետ հռետորաբանութենէն:



«Հայաստանի Հանրապետութեան ներկայ ղեկավարութիւնը, Արեւմուտքի ազդեցութեան տակ, կ'ընէ յայտարարութիւններ, որոնք կը հակասեն Աբխազիոյ Հանրապետութեան ընտրած ուղիին»:

«Հայաստանի վարչապետը իր վերջին յայտարարութեան մէջ պաշտպանած է «Վրաստանի միասնականութիւնը, գերիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը, անկախութիւնը եւ ժողովրդավարութիւնը», ինչ որ եապէս կը հակասէ Աբխազիոյ Հանրապետութեան գերիշխանութեան փաստին:

«Աբխազիոյ հայերը ունին այն ամենը, ինչ որ Նիկոլ Փաշինեանը չկրօցաւ երաշխաւորել ղարաբաղի հայերուն, որոնք իր վարած քաղաքականութեան պատճառով բախեցան պետականութեան փլուզման եւ հայրենի հողէն զանգուածային արտահոսքի ողբերգութեան»:

«Աւելին, Նիկոլ Փաշինեանի քաղաքականութեան հետեւանքը եղած է ինքնին Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան խախտումը»:

«Հիմնուելով իրերու փաստացի վիճակին վրայ՝ «միասնութիւնը, գերիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ ժողովրդավարութիւնը» յարմարագոյն բնութագրներն են Աբխազիոյ Հանրապետութեան, ժողովրդավարական պետութեան, որ կը վերահսկէ իր ամբողջ տարածքը, որուն անկախութիւնը ճանչցուած է Ռուսիոյ եւ շարք մը այլ երկիրներու կողմէ:

«Մենք Հայաստանի ղեկավարութեան կոչ կ'ուղղենք արտաքին քաղաքականութիւնը վարելու ընթացքին հաշուի նստելու փաստացի կացութեան հետ», յիշուած է յայտարարութեան մէջ:

ՖՐԱՆՍԱՆ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒՐՈՏԵՍԻԼԻ»-Ի ՅԱՂԹՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐՐՈՐՂԵ

«Մանկական Եւրոտեսիլ 2023»-ին յաղթեց Ֆրանսան: Երկրորդ տեղը գրաւեց Սպանիան:

Նիցցայի մէջ տեղի ունեցած մրցոյթին Հայաստանը ներկայացնող Yan Girls խումբը երրորդ դիրքը գրաւեց «Do It My Way» երգով:

«Մանկական Եւրոտեսիլ»-ին կը մասնակցէր 16 երկիր:



CAUCASUS HERITAGE WATCH. «ԱՏՐՊԵՅԱՆՅԻՆԵՐԸ ՀԱՆԱՊԱՐԶ ԿԸ ԿԱՌՈՒՅԵՆ ՇՈՒՇԻ ԴԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ԸՆԴՄԵՋԵՆ»

Կովկասեան ժառանգութեան պաշտպանութեան միջազգային կազմակերպութիւնը (Caucasus Heritage Watch) ահագանգելով կը տեղեկացնէ, որ 5 Հոկտեմբերէն մինչեւ 3 Նոյեմբեր ժամանակահատուածին մէջ ատրպէյճանցիները հողաբարձ մեքենաներով ճանապարհ կը հարթեն Շուշիի պատմական գերեզմանատան ընդմէջէն, որը ծանօթ է որպէս Երեւանեան դարպասներու մտակայքի գերեզմանոց:



Համապատասխան արբանեակային պատկերները հրապարակուած են կազմակերպութեան X-ի հասարակական ցանցին վրայ:

Ինչպէս յիշուած է գրառումին մէջ, խիտ անտառը կը ծածկէ գերեզմանոցը, ուստի անոր սահմանները տեղորոշելու համար կազմակերպութիւնը կիրառած է Շուշիի մասին հրապարակումներն ու քարտէզները:

Ծառերուն միջեւ կայ առնուազն 78 տապանաքար հայերէն տապանագիրերով, որոնք թուագրուած են 1802-1913 թուականներուն: Յարդյայտնի չէ, թէ անոնցմէ քանի՞ն վնասուած է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԶԸ ԿՐԿՆԵԼՈՎ ԹՇՆԱՄԻՆ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ. «ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՅ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՆԻ»

Հայաստանի Հանրապետութիւնը լիակատար կերպով կը ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը՝ Լեռնային Ղարաբաղը ներառեալ: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրէս», լրագրողներու հետ գրոյցի ընթացքին յայտարարած է Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան՝ պատասխանելով այն հարցումին, թէ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծուած է՝ նկատի առնելով, որ Հայաստան աւելի քան 30 տարի պայքարած է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումին համար:



«Հայաստանի Հանրապետութիւնը նման հարց այսօր չունի: Հայաստանի Հանրապետութիւնը լիակատար կերպով կը ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը՝ Լեռնային Ղարաբաղը ներառեալ: Ասիկա արդէն կ'երեւի 8 անգամ ըսած ենք վերջին երկու տարուան ընթացքին: Այլ ի՞նչ պէտք է ըսել», յայտնած է Սիմոնեան:

Պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք արցախահայութեան իրաւունքներուն հարցը Հայաստանի հիմա կը քննարկէ՞ Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագրի շրջագիծէն ներս, Սիմոնեան ըսած է.

«Կը կարծեմ, որ մենք պէտք է այս պատմական փուլին կեդրոնանանք Հայաստան-Ատրպէյճան խաղաղութեան պայմանագրի կնքման եւ տարածաշրջանի բոլոր ճանապարհներու բացման վրայ: Հետագային ինչ-որ ատրպէյճանցի ցանկութիւն կ'ունենայ կամ չ'ունենար վերադառնալու Հայաստան ապրելու, ինչ-որ հայ ցանկութիւն կ'ունենայ կամ չ'ունենար վերադառնալու Պաքո, Ստեփանակերտ, Շուշի եւ մնացած բոլոր այն բնակավայրերը, ուր հայեր ապրած են՝ արդէն ապագայի հարց է», ըսած է Սիմոնեան՝ անցնելով, որ այսօրուան դրութեամբ ատիկա անիրատեսական է:

Սիմոնեան ընդգծած է, որ առանց խաղաղութեան, առանց ատելութեան խօսքի վերացման Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն վերադարձը անկարելի է:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ. «ԻՐԱՎԻՃԱԿԸ ՓՐԿԵԼՈՒ ԶԱՄԱՐ ՄԵՋ ԱՆՐՈՒՄԵՆՑ ԵՆ ՄԻՏԵ, ԿԱՍԷ ԵՒ ՈՒԺԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

Ստորել կը ներկայացնենք «Կամաւորական շարժում» ԶԿ-ի նախագահ Հրանդ Մարգարեանի խօսքը Միեր Յարութիւնեանի 50-ամեակին նուիրուած ձեռնարկին:

«Այսօր մեր Միերի, մեր ընկերոջ ծնունդն է՝ մենք եկել ենք իրեն այցի: Եկել ենք գլխիկոր, եկել ենք ամօթով: Ամօթով, որովհետեւ մեր տունը կիսատ է: Ամօթով, որովհետեւ Արցախը գերեզարուած է: Ամօթով, որովհետեւ կրկին մեր ժողովուրդը գաղթական է դարձել: Ամօթով, որովհետեւ մեր գործը կիսատ է: Միերի հետապնդած նպատակը առգոյ չէ: Ամօթով ենք, բայց ոչ կոտորուած: Ամօթով ենք, բայց ոչ ընկճուած: Ամօթով ենք, բայց ոչ յուսահատուած:



Մենք գիտակցում ենք, որ պետք է նորից սկսել, պետք է նորից ազատագրել, պետք է նորից կռուել, եւ մեր մէջ վրեժը բոցկլտում է, վրեժի հուրը բոցկլտում է: Մենք մեր ատամները սեղմած ենք պահում եւ միակ յոյսը, որով կարողանում ենք ապրել, որով կարողանում ենք ոտքի կանգնել այն է, որ պայքարը շուտով սկսուելու է, որ մենք կրկին Զայոց լեռներից դեպի տափաստաններ ենք քշելու թշնամու: Այդ յոյսն է, որ այսօր մեզ կարելի է դարձնում ոտքի վրայ մնալ:

Միերը կռուի մարդ էր՝ իր կեանքը կռիւն էր, աւելի ճիշդ կռիւը իր կեանքն էր: Նա կռուի մէջ այնպէս էր ինչպէս ձուկը ջրում, նա հերոս էր, բայց դա իր համար առաւելութիւն չէր համարում: Նա հերոս էր, բայց դա չէր ցուցադրում: Նա հերոս էր, բայց իրեն արտօնեալ չէր համարում, համեստ էր մեզանից մէկն էր, աննկատ էր, բայց հերոս էր:

Միերը պարզ մարդ էր, ամենաբարդ հարցերին նայում էր շատ պարզ, յստակ, ուղիղ եւ ասում էր՝ այս իշխանութիւնները եթէ ուզում են մեր երկիրը փրկել կարող ենք կողք-կողքի լինել, իսկ եթէ չեն ուզում թող մի կողմ կանգնեն, թող չխանգարեն, որովհետեւ եթէ մեզ հետ չեն այս պայքարում ուրեմն մեր դէմ են, մենք ենք իրենց դէմ, քանի որ յանուն հայրենիքի փրկութեան ոչ մի բան ինքնանպատակ չէ: Եւ Միերն այդ տեսակն էր, որ գիտակցում էր հայրենիքի արժեքը, գիտակցում էր, որ հայրենիքի արժեքը իր կեանքից թանկ է: Եւ Միերը կ'ասէր այսօր շատ-շատերին, որ ի՞նչ էք կառնել թշնամու ողորմածութեանը, ի՞նչ էք կառնել օտարի գթասրտութեանը, ինչո՞ւ էք դռնէ-դուռն ընկել, ինչո՞ւ էք մեր փրկութիւնը ուրիշ տեղ փնտռում՝ յետուէ՞ք մեր ժողովրդի վրայ, կազմակերպէ՞ք մեր ժողովրդին: Կազմակերպէ՞ք մեր ժողովրդի ռեսուրսը, պայքարի դուրս եկէ՞ք, պատրաստուէ՞ք կռուի եւ միայն դրա մէջ է փրկութիւնը:

Մեզ երեք բան է անհրաժեշտ՝ միտք, կամք եւ ուժականութիւն: Միտք, որ ելք գտնենք իրավիճակից: Միտք, որ ճանապարհ տեսնենք: Միտք, որ խոհեմ լինենք:

Կամք, որ չընկրկենք, կամք, որ չկանգնենք, կամք, որ յարատեւ պայքարին հաւատք ունենանք, յարատեւ պայքարի ճանապարհով քայլենք: Կամք, որ պայքարով կերտենք մեր ապագան, պայքարով կերտենք մեր հայրենիքը:


Եւ ուժականութիւն, ուժ, հարուածելու կարողականութիւն, եթէ չունեն այդ ոչ ոք քեզ չի յարգելու: Եւ Միերը մեր ուժն էր, մեր հարուածն էր, մեր բազկի գարկն էր, Միերները այդպիսին էին: Եւ իմ կոչն է բոլոր Միերներին Զայաստանով մէկ վերակազմակերպուէ՞ք, գինուէ՞ք, կռուի արուեստին տիրապետէ՞ք, այս իշխանութեան կամ առանց այս իշխանութեան մենք պայքար ունենք: Այս իշխանութեան կամ առանց այս իշխանութեան պետք է այս երկիրը փրկել եւ դա չի լինում աղաչելով, ուրիշի գթասրտութեանը կառնելով, դա լինելու է միայն պայքարով:

Ես վստահ եմ, որ մի օր կրկին վերադառնալու ենք այստեղ: Վերադառնալու ենք մեր կուրծքը ուռած, մեր ճակատը բարձր, հպարտ ասելու ենք՝ մենք կռուում ենք, մենք պայքարում ենք, մենք շարունակում ենք քո գործը Միեր, եւ այսօրուայ պէս ընկճուած, ամօթով եւ գլխիկոր չենք լինի: Ես վստահ եմ այդ օրը գալու է, Միերների օրը գալու է, այլ ճանապարհ չկայ, անխուսափելիորեն գալու է»:

ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆԴ ԳԼԽԱՎՈՐ ՆՇԱՆԸ

Գրիգոր Արք. Զիֆթեան

Կեանքի ընթացքին իրարու հանդէպ կատարած մեր կարելոր գործերուն մէջ առաջնակարգ տեղ կը գրաւէ դաստիարակութիւնը. ծնողքը՝ իր զաւակին, դաստիարակը՝ իր աշակերտին, մէկ խօսքով՝ մեծ սերունդը՝ նորեկին: Մանուկ տարիքէն սկսող այս անփոխարինելի գործը՝ դաստիարակութիւնը, որ տունէն կը ծաւալի, դպրոցական օրերուն կանոնաւորութիւն կը զգենու դաստիարակ ուսուցիչներու անմասնօրոգ սիրով տրուած կրթութեամբ:



Իսկական դպրոցը, սակայն, կեանքը ինքն է՝ իր բոլոր տարօրինակութիւններով, վերիվայրումներով, յաջողութիւններով եւ դժբախտութիւններով, որոնցմէ վերապրելու կամքով օժտուած է մարդ եակը, որքան ալ յուսահատութեան պահեր անցնէ կամ նոյնիսկ վերապրելու յոյսը կորսնցնէ ան:

Պարագաներու բերումով, շատ մը մանուկներ առանց դպրոցական ուսման կը մնային անցեալին: Ներկայ քաղաքակիրթ եւ նոյնիսկ կարգ մը երրորդ աշխարհի երկիրներու մէջ նախնական, միջնակարգ եւ երկրորդական ուսումը դարձած է պարտադիր, իսկ համալսարանական ուսում ունեցող երիտասարդութեան ընձեռուած գործի առիթները պատճառ կը դառնան, որ անոնք միշտ փափաք ունենան համալսարանական վկայական ձեռք ձգելու:

Դաստիարակութեան գործադրութիւնը, կամ ընդունումը դաստիարակուողին կողմէ, ժողովրդային բառով «հասունացում» կը կոչուի: Յատկապէս դաստիարակ ուսուցիչներ կը զգան այդ հասունացումը եւ իրենց կրթական ժողովներու ընթացքին, երբ իւրաքանչիւր աշակերտի վարքը քննարկման կ'ենթարկեն, իրենց վկայութիւնը կու տան անոնցմէ ոմանց մասին՝ ըսելով. «Բաւական հասունացած է»:

Բնութենէն առնուած այս օրինակը, սակայն, բնութեան մէջ հասունացած պտուղի իմաստը չունի, որ երբ շատ հասունանայ, ծառէն պոկուելով գետին կ'իջնայ: Սոյն օրինակը յաճախ կը գործածուի մահուան պարագային՝ ցոյց տալու, որ բոլոր մարդոց վերջը, հասունանալով դարձեալ հողին վերադառնալու ճակատագիրը պիտի ըլլայ: Սակայն այս պարագային, կեանքի պայքարին մէջ մտնելու պատրաստ եւ անոր մարտահրաւերները դիմակայելու ուժը ունենալու ակնարկութիւն է. այսինքն պատանին սկսել է երիտասարդական կեանք թեւակոխել քաջութեամբ եւ ինքնավստահութեամբ:

Կեանքի մէջ հակասութիւնները, կարծիքներու տարբերութիւնները, մօտեցումներու բազմաբանութիւնը միշտ պատճառ կը հանդիսանան, որ հակառակութիւններ ի յայտ գան, նոյնիսկ հարագատ մարդոց միջեւ: Նոյն հօր եւ մօր զաւակներ իրար դէմ կը պայքարին, այս կամ այն հարցին մասին իրենց ունեցած կարծիքներու տարբերութեան պատճառաւ: Երկար ժամանակ ետք, երբ կիրքերը հանդարտին, եւ պայքարը չքանայ՝ հակադիր կողմերը ցաւով կ'անդադրանան, որ անիմաստ էր այդքան հակառակութիւն: Յաճախ անոնք նոր խելքի կու գան, որ չէր արժէր փոքր հարցի մը այդքան ծաւալ տալ եւ ձիւնագնդակի նման աճեցնել, եւ հարուածել տան ամենէն խնկելի պատը՝ սիրոյ խորանը:

Վստահաբար բոլորս ալ ճանչցած ենք մարդիկ, ըլլա՞ն անոնք հարագատներ կամ բարեկամներ, ծանօթներ՝ մեր շրջապատին մէջ անձեր, որոնք ընկեր ընտրելու մէջ ձախողած են: Այսպիսիներ վերջաւորութեան խաբուած ըլլալու զգացումով՝ յուսալքման պահեր ապրած են եւ երբեմն ներանձնական կեանքի դիմելով, հեռու մնացած ընկերական շրջանակէն: Ասոնք զարմանալիօրէն յստակատես մարդիկ են, սակայն ո՛չ թէ մարդ ճանչնալու առումով, այլ ամէն ինչի մէջ յստակութիւն փնտռելու իմաստով: Երբ անձի մը նային, անոր մէջ միշտ անկեղծութիւն կը տեսնեն, քան խորամանկութիւն կամ վատութիւն: Մէկ խօսքով, ապագայի նկատմամբ լաւատես մարդիկ են այս անձերը եւ ճիշդ այդ պատճառով կը հիասթափուին: Ասոնք կը սիրեն այնպիսի անձեր, որոնք ո՛չ միայն ապագայի մասին կը խօսին՝ օգտագործելու համար գիրենք, այլ կ'ուզեն ապագային մէջ տեղ տալ նաեւ իրենց: Այս առաքինութեան կամ երախտագիտութիւն կոչուածին մասին մտածող կ'ըլլա՞յ արդեօք, երբ յաջողութիւնը ամենօրեայ երջանակութիւն է դարձել արդէն: Այո՛, կեանքը իսկապէս երանելի կ'ըլլայ այն մարդուն, որ իր հարագատ ընկերոջմէն խոյս չի՝ տար որոշ պարագաներու, այլ ընդհակառակը միակ ապաստանը անոր երդիքը կը համարէ, ներութեան մատուած պահերուն:

Հաւանաբար կեանքի դժուար ըլլալուն մասին այսքան չէին գիտեր մարդիկ, երբ կ'ապրէին գիւղական պայմաններու ներ շրջանակին մէջ: Բազմամարդ քաղաքները եւ ընկերային բարդ շրջագիծը ամէն ինչ փոփոխութեան ենթարկած է ներկայիս: Չարագածը եւ տգետը, գիրար ճճանչցող մարդիկ երբեմն սեղանակից կը դառնան իրարու, մէկուն անմակարդակ գրոյցը եւ անհամ կատարակները, եւ միւսին հաւասարակշռուած խօսքը ու օրինակելի վարքը դեմ յանդիման դնելով նոյն սեղանին վրայ: Այստեղ ի յայտ կու գան երկու կամ աւելի մակարդակներ, երբ մէկը չ'ուզեր նոյնիսկ

Ո՞Ր ԿՐ ՎԱԽՆԱՅ ՀՅՂ-ԷՆ



Կյուրո Վ. Սամոյլով

Սուրիոյ հիւսիսը ու Յայաստանի արեւմուտքը գտնուող մեր դարաւոր ուսոյին՝ Թուրքիոյ մէջ 1980 թուականին, տեղի ունեցաւ գինուորական պետական յեղաշրջում, ու նախագահ դարձաւ զօր. Բենաման Էվրեն (1980-1989): Անոր օրով վարչապետութեան աթոռը զբաղեցուց Թուրկուլ Էօզալ (1982-1989), ապա ան նախագահ դարձաւ (1989-1993):

Թուրկուլ Էօզալ այն մարդն էր, որ իր կատարած պատմական այցելութենէն՝ դէպի արեւելքի թրքախօս երկիր, վերադարձին յայտարարութիւն մը կատարեց՝ ըսելով. «Յայերը պատմութենէն դաս չեն քաղած»: Արցախի գոյապայքարի, ապա ազատագրական պայքարի օրերն էին, եւ Էօզալ ի յայտարարութիւնը կը զուգահիշէր ու կ'ամէնէր Արցախի պայքարին:

Մեր ազատամարտիկներու յաղթանակները սկսան այդ օրերէն, այդ յայտարարութենէն ետք, երբ փոխուեցաւ Ռուսիոյ արտաքին քաղաքականութիւնը Թուրքիոյ հանդէպ: Թէ ինչո՞ւ. հարցումը պէտք է ուղղել թերեւս Մոսկուային, մանաւանդ անոր այդ օրերու պաշտպանութեան նախարար զօր. Շափոշնիքովին:



1. Բեսապի ժողովրդային տունը՝ «Գրադարանը» 1951-ին:



2. Բեսապի ժողովրդային տունը՝ «Գրադարանը» ներկայիս:

Չօր. Էվրենի յեղաշրջումը յաջորդած էր 1970-ականներէն ետք, Պուլենթ Եճեվիտ-Սուլեյման Տեմիրել վարչապետներուն մրցավազքերուն, երբ արդէն սկսած էին քրտական ազատագրական շարժումները ուժեղանալ, ինչ որ աւելի լուսարձակ կը սփռէր Թուրքիոյ քաղաքական բեմին վրայ:

Աւելորդ նշում պիտի չըլլայ աւելցնել, որ Էօզալի ժամանակաշրջանին իրարու յաջորդեցին՝ Մեսուտ Եըլմազ, Նեմէտտին Էրպաքան ու Թանսու Չիլլեր, մինչեւ 1999, երբ սկսաւ Ապտիլլա Կիլ - Էրտողան ժամակաշրջանը:

Չօր. Բենաման Էվրենի օրերուն Սուրիոյ հետ Թուրքիոյ սահմանային իրավիճակը շատ անհանգիստ էր: Անցեալ դարու 50-ական թուականներուն սահմանային ապահովութեան համաձայնագիր մը կնքուած էր Սուրիոյ (Ետիպ Չիչեքլիի օրերուն) եւ Թուրքիոյ միջեւ, որով Թուրքիա յաճառութիւն ստանձնած էր իր բանակով հսկելու եւ ապահով դարձնելու սահմանը, որուն դիմաց Սուրիա յանձն կ'ամէնէր միայն ոստիկանատուներ կառուցել ու ոստիկաններով կատարել սահմանային հսկողութիւնը:

Վերոյիշեալ համաձայնագրին պատճառով, Էվրենի օրերուն, սահմանին հաստատուած թուրք զինուորները դարձած էին շփացած ու յարձակողապաշտ: Ամէնօրեայ ոտնձգութիւնները անպակաս էին նոյնիսկ ծննդավայրիս՝ Բեսապի սահմանային հատուածին վրայ:

Չօր. Էվրենի իշխանութեան վերջին տարիներուն Թուրքիոյ մէջ սկսան փչել «թրքավարի» ժողովրդավարութեան հովեր:

Սուրիոյ հետ յարաբերութիւնները համեմատական մեղմացում ապրեցան, որուն յաջորդեց սահմանային վայրերու վրայ գտնուող բնակավայրերու բնակչութեան փոխադարձ հանդիպումներ՝ երկուստեք: Այս հանդիպումները անոնք «Կէօրըձմա» (տեսակցութիւն՝ թրքերէն) կը կոչէին: Բեսապալ «բախտը» ունեցաւ «վայելելու» կէօրըձմաներ:

Այսօր անկարող եմ վերոյիշելու ճշգրիտ թուականը, սակայն պայծառօրէն կը յիշեմ, որ «Կէօրըձմա» մը ընթացքին Բեսապ ժամանած էր Բեսապի հանդիպակաց կողմը գտնուող թրքական Եայլատաղ քաղաքին քաղաքապետը: Կարճ ու սատանայածին ծերուկ աղուէս մըն էր ու ման կու գար հրապարակին վրայ՝ դիտելով վաճառատուներու ցուցափեղկերը:

Այստեղ շունչ մը քաշելով՝ ըսեմ, որ Եայլատաղը, նախքան Ալեքսանտրեթի նահանգը (Սանճագը), Սուրիայէն խլուելով եւ Թուրքիոյ նուէր տրուելով՝ «հոգատար» ասպետական ֆրանսական իշխանութիւններուն կողմէ, կը կոչուէր Օրտու, որուն բնակիչները միայն թուրքեր չէին, այլ հոն կը բնակէին յոյներ, քրիստոնէայ եւ ալեւի արաբներ:

Եայլատաղի վերածուած Օրտուն Յայոց Տեղասպանութեան օրերուն քեսապահայութեան տարագրութեան առաջին հանգրուանն էր: Անկասկած որ գայմազ անիստ Օրտուի եւ մերձակայ բնակավայրերուն թուրքերը ծիթենիի ոստերով չէին դիմաւորած տարագրեալները, ընդհակառակը, գործած էին ամէն տեսակի խժժութիւններ ու վայրագութիւններ, ապա նաեւ կողոպտած էին Բեսապը իր գիւղերով, միայն թէ հրդեհի չէին տուած, ինչպէս կատարած էին Ատանայի կոտորածներուն ժամանակ (1909-ին):

Ա. Աշխարհամարտի աւարտէն ետք, նախքան ֆրանսական բանակային ուժերու Բեսապ եւ աւելի անդին հասնիլը, շրջանին մէջ կը տիրէր անիշխանութիւն եւ անապահովութիւն: Թրքական հրոսակախումբերու ասպատականութիւնները անպակաս էին վերստին ապրելու համար մաքառող Բեսապին մէջ:

Այդ ժամանակաշրջանին (1919-1922) քեսապցիք կազմած էին Ազգային միութեան իշխանութիւնը, որուն ողնաշարը ՅՅԴ-ն էր, եւ որուն բազուկի ուժը հանդիսացած էին դաշնակից բանակներուն մէջ ծառայած ու անկէ հեռացած քեսապցի կամաւորները, մարտիկները (տե՛ս Յայկազ Թրթթեանի «Բեսապի Պատիկ Յանրապետութիւնը» գիրքը):

Ազգային միութեան իշխանութիւնը յանձնառու կ'ըլլայ իր կամաւորներով վնասագ երծելու շրջանը այդ հրոսակախումբերէն, որոնց գլխաւոր որջը դարձած էր Եայլատաղ-Օրտուն, ուստի ան ալ կը ստանայ իր բաժինը այդ վնասագ երծումէն: Այդ մէկը ապահովութիւն կու տայ նոյնիսկ Բեսապէն դուրս յոյն ու արաբ բնակչութեան:

«Կէօրըձմա» եկած աղուէս քաղաքապետը, ըստ երեւոյթին, քաջատեղեակ էր վերոյիշեալ պատմութենէն, ու երբ մենք մեր անճոռնի ու կոտորած թրքերէնով հետը որպէս թէ «մտերմիկ ու անկեղծ» գրոյցի բռնուեցանք, ան յանկարծ հարց տուաւ.

– Ո՞ր կը գտնուի Բեսապի «գրադարան»:

Իր փնտռածը Բեսապի ժողովրդային տունն էր, որուն մէջ գտնուող հիւսուող գրադարանին պատճառով քեսապցիք գայն ակումբ անուանելու փոխարէն «Գրադարան» կը կոչէին:

«Գրադարան»՝ գրադարանը ՅՅԴ-ի ակումբն էր: Ու ծերունի քաղաքապետին փնտռածը Դաշնակցութեան ակումբն էր, Ազգային միութեան իշխանութեան գոյատեւութենէն 80-85 տարիներ ետք:

Անոր սրտին ու մտքին մէջ առկայ էր Դաշնակցութեան առթած վախը: Վերոյիշեալ երկար յառաջաբանէն ետք, որպէս մէկը, որ քաջածանօթ է հայոց թէ Դաշնակցութեան պատմութեանց, ու ակնարկս միշտ սեւեռած՝ (նոյնիսկ Բեսապէն) մերօրեայ ժամանակներուն ու ելեւէջներուն վրայ, ես ինծի հարց կու տամ.

– Ո՞վ կը վախնայ ՅՅԴ-էն:

Անկասկած որ 133-ամեայ Դաշնակցութիւնը նոյնը չէ ու չի կրնար ըլլալ մէկ ու քառորդ դարու տասնամեակներէ ի վեր: Յայ կեանքի դրական թէ ժխտական յարափոփոխ իրավիճակէն անջատուած ու անցեալին մէջ խրած չի կրնար ըլլալ ՅՅԴ-ն:

Յիմա մենք կ'ապրինք 21-րդ դարուն մէջ՝ իր միջազգային թէ ազգային, քաղաքական, տնտեսական ու ընկերային պայմաններով, ու չենք կըրնար մենք մեզ տեղաւորել տասնամեակի մը մէջ:

Սակայն 133-ամեայ Դաշնակցութեան ազգային գաղափարախօսութիւնը նոյնն է. ան միայն բարեփոխուած ու պարզեցուած է, անոր ազգային խորքն ու բովանդակութիւնը նոյնն է:

Եթէ ազգութեան եութիւնը ունի հիմնաքարեր, անոնք են՝ լեզուն, պատմութիւնը, դարաւոր կեանքի պատմական հողաշերտը, հոգեղէն հարստութիւնները, կրօնը, հաւատալիքներն ու ապագայի համար անոր տեսիլքները, եթէ ասոնք հայ ազգին ինքնութիւնը կազմող բաղադրիչներն են, ապա ՅՅԴ-ն գանոնք դարձուցած է իր գաղափարախօսութեան առանցքը, հիմքն ու յանձնառու եղած է պահելու, պահպանելու ու գործադրութեան դնելու գանոնք: Եւ այդ յանձնառութիւնն է, որ զինք պահած-պահպանած է ու առաջնորդած, անցնող 133 տարիներուն:

Այդ ազգային գաղափարախօսութիւնն է, ուժն է, որ գայն՝ ՅՅԴ-ն, միշտ պահած է ազգային պատմէշին վրայ՝ Յայաստանի, Արցախի ու Սփիւռքի տարածքներուն:

Այդ գաղափարախօսութիւնն էր, որ զինք առաջնորդեց արցախեան գոյապայքարին, ազգային ազատագրական պայքարին:

Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը զինք առաջնորդեց հանդիսանալու հայութեան պաշտպանը Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն թէ այլ վտանգուած բնակավայրերուն մէջ:

Նոյն յանձնառութեամբ ան պաշտպանը դարձաւ 1970-ական թուականներէն ետք Յայոց Տեղասպանութեան ճանաչումին դիմաց քաշուած լուրջեան պատ քանդելու սփիւռքեան զինական պայքարի՝ ցեղասպանութեան արդարութեան եւ հատուցման պայքարի ելած հայորդիներուն եւ յաճախ ալ իր գաղափարներով սնուցած է գանոնք:

Դաշնակցութիւնը այդպէս եղած է ու կը շարունակէ այդպէս մնալ ցայսօր:

Արեւմտեւ հաստատուած ու փաստուած իրողութիւնն է, որ Դաշնակցութեան ազգային, անարատ ու անսակարկ գաղափարախօսութիւնը ուժ է, որքան ալ իր աշխարհացրի կառոյցները ազդուին համաշխարհային մակընթացութիւններէն թէ տեղատուութիւններէն:

Իր ազգային գաղափարախօսութիւնը ուժ է՝ պահելու ու պահպանելու, ապա նաեւ հզօրացնելու մեր ազգային ինքնութիւնը, որքան ալ դաժան ըլլան մեր ազգին գլխուն տեղացող ամէնօրեայ հարուածները:

Դաշնակցութեան ազգային գաղափարախօսութիւնը անառարկելի պաշտպան ուժն է իսկական ազգային դաստիարակութեան ու կրթութեան հայեցակարգին, որ ահ ու սարսափ կը պատճառէ արտաքին ու մանաւանդ ներքին ապագային ուժերուն՝ սկսած անատատիրական, դրամատիրական, ազատական, համայնավարական ու նոր-համայնավարական ուժերուն՝ թշնամիներուն:

Արցախի դժբախտ հայաթափման իրականութեան դիմաց, հայութեան մռայլ իրականութեան դիմաց, մերօրեայ ապագային իշխանութիւնները խորքին մէջ Դաշնակցութեան հոգեղէն ուժերէն, ազգային գաղափարախօսութենէն է, որ կը վախնան, կը վախնան իսկական ազատ, անկախ ու միացեալ (Արցախը ներառեալ) Յայաստանի մը տեսիլքէն, որուն կը ձգտի ՅՅԴ-ն:

Տեղասպանութեան հատուցման, պահանջատիրութեան հոգեղէն ուժն է անոնց վախի աղբիւրը:

Ինծի համար անհասկնալի է ու այդպէս կը մնայ հայրենի իշխանու-

Թուրքիոյ նուրջ

ԻՐԱՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ԵՒ ՈՐ ԹՈՒՐՔԻԱՆ ԱՌԵՐԵՍՈՒՄԱՐԳՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՈՒ ԽԱՆՏՈՒՄ ԻՍԿԱԿԱՆ ՇԵՏԵԿՆԵՐՈՒ ՇԵՏ՝

«Էրմէնի հապեր»-ի համաձայն, «Human rights watch» միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը իրապարակած է կազմակերպութեան Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ բաժնի տնօրէն Դիւ Ուիլիզմսընի «Church Times»-ի յօդուածը:

Կազմակերպութիւնը յայտնած է, որ 28 Սեպտեմբերին Գերագոյն դատարանի կողմէ հաստատուած Օսման Զաւալայի անօրինականօրէն խըստացուած ցմահ ազատազրկման մասին «Երկրի Նախագահը» «Էրտողա-նը» նախապէս յայտարարած էր իր շարք մը ելոյթներուն ընթացքին»:



Յօդուածին մէջ Ուիլիզմսըն կը նշէ, որ որոշումը սարսափելի ցուցանիշ է այն միապետական ճանապարհին, որով Թուրքիան անցած է Երտողանի ղեկավարութեան ընթացքին: Անոր համաձայն, ասիկա ցոյց կու տայ, որ դաւադրութեան վայրի տեսութիւնները եւ ցուցադրական դատավարութիւնները ընթացքին մարդիկ մեղադրելու ցանկութիւնը դարձած են հսկողութեան տակ պահելու միջոց բոլոր անոնց, որոնք հակուած են կասկածի տակ ղնելու Թուրքիոյ հեղինակութիւնը:

Ուիլիզմսըն կը քննարկէ նաեւ գործի միջազգային հետեւանքները՝ գըտնելով, որ այն ցոյց կու տայ, որ «Թուրքիա հակուած է ճեղքելու սահմանները» եւ կը հեռանայ «ըլլալէ գործընկեր, որ կը յարգէ օրէնքի գերակայութիւնը եւ ընդհանուր հիմնական արժեքային համակարգերը, որպէսզի երաշխաւորէ, որ իր Եւրոպացի եւ ԱՄՆ դաշնակիցները կը վստահին Թուրքիոյ»: Այս պարագային, Անգարայի դրսեւորած շահն ու անհնազանդութիւնը միջազգային կարեւոր հարցերու նկատմամբ անկանխատեսելիութեան դիրքորոշում ընտրելու ընդհանուր միտումի մէկ մասն են:

Անդրադառնալով գործի անօրինականութեան եւ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի վճիռին, որ կալանաւորումը «քաղաքական դրդապատճառներ ունի», Ուիլիզմսըն ըսած է, որ եւրախորհուրդը ազատ չէ արձակած Զաւալան, հակառակ անոր որ ան արդէն սկսած էր գործել «խախտման ընթացակարգը» եւ ի վերջոյ, դատավճիռները չեղարկուած են եւ այդ մէկը կը քննարկուի, որպէս Զաւալայի ազատ արձակման ձախողման եւ վերջնական դատապարտման եւրոպական կառոյցներու հետ Թուրքիոյ յարաբերութիւններու «խափանման» շրջագիծին մէջ:

Անոր համաձայն, մինչդէռ Երտողան լիովին կ'անտեսէ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի պարտադիր որոշումները, խախտման ընթացակարգը կ'ընթանայ շատ դանդաղ (սամոյցի նման), ինչ որ կը նշանակէ, որ Թուրքիոյ անհնազանդ պահուածքը դեռ չէ յանգեցուցած իսկական հետեւանքներու, ինչպիսիք են պատժամիջոցները, Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին ձայներու կորուստը եւ դաշինքէն դուրս մնալը:

Ուիլիզմսընի կարծիքով, Թուրքիոյ ընդհանուր ռազմավարութիւնը հիմնուած է գիշումներ ձեռք բերելու վրայ: Կը նշուի նաեւ, որ (Անգարան) խաբանարարութեան ենթարկած է Շուէտի եւ Ֆինլանտայի ՆԱՏՕ-ին արագացուած անդամակցութեան գործընթացը Ռուսիոյ՝ Ուքրանիա մտնելէ վերջ, նախ դադարեցնելով գործընթացը երկու երկիրներուն համար, ապա մերժելով Շուէտի անդամակցութիւնը, պնդած է, որ Շուէտի անդամակցութեան հաստատումը տեղի կ'ունենայ այն պայմանով, որ Թուրքիան խըստօրէն ճնշէ որոշ քիւրտեր, որոնց կը համարէ ահաբեկիչներ, եւ անոնք, որոնք կ'աջակցին Ֆեթհալլա Կիլիչին:

Փաստաբանին Անկիւնը

ԻՄԱՆԱՔ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԻՆՔ



Փաստաբան Մարիա Գաբրիէլեան

«Գանձասար»-ի այս սիւնակը կը միտի իրագրել դարձնել հասարակութիւնը գիւնը հետաքրքրող սուրիական օրէնքներուն: Առ այդ, պատաստակամ ենք ընդունելու օրէնքներու վերաբերող ձեր լուսաբանական հարցումները եւ թերթին ծամբով պատասխանելու անոնց: Ձեր հարցումները կրնաք ուղարկել հետեւեալ էլեկտրոնային հասցէին (E-mail) mariavaroujankaprielian@hotmail.com: Մեր իրաւունքները պաշտպանուած են օրէնքներով՝ իմանանք եւ պաշտպանուինք:

«Գանձասար»

ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹԻՒՆ Բ. (Կալուածներու վարձքերու ճշդման մասին)

Նախորդ թիւով իրագրեցինք էինք ընթերցողը, որ յաջորդիւ պիտի ծանօթանանք կալուածներու վարձքերու ճշդման գործընթացին:

1952 թուակիր թիւ 111 օրէնքի եւ անոր կրած փոփոխութիւններու հիման վրայ՝ կալուածներու վարձքերը կը ճշդուին կալուածի արժեքի տոկոսային հետեւեալ համեմատութեամբ.

ա. -Բնակելու համար վարձուած կալուածի արժեքի 5%-ը, որուն վրայ կ'աւելնայ պայմանագրին մէջ արձանագրուած կահկարասի արժեքի 20%-ը:

բ. -Որեւէ արհեստով կամ գիտարհեստով զբաղելու համար վարձուած կալուածի արժեքի 6%-ը:

գ. -Պաշտօնական կողմերու (կառավարութիւն, կուսակցութիւններ, միութիւններ, հաստատութիւններ, եւ այլն) տրամադրելի կալուածի արժեքի 7%-ը:

դ. -Որպէս դպրոց օգտագործուելու համար վարձուած կալուածի արժեքի 8%-ը:

Տոկոսային այս համեմատութիւնը միամեակի համար է: Վարձուորը պետք է իմանայ նաեւ, որ կալուածատերը իրաւունք չունի երեք ամիսէն աւելի կանխիկ վարձք ստանալու այն կալուածներուն համար, որոնց վարձակալութիւնը ենթակայ է ինքնին երկարաձգման:

Կալուածատերը կամ վարձուորը եթէ վարձքի գումարին գծով անիրաւութիւն կամ անարդարութիւն նկատէ, ապա կրնայ դիմել դատարան, որպէսզի փորձագետի ծամբով ճշդուի վարձքը:

Կողմերը այս պատճառով դատարան կրնան դիմել եռամեայ դրուբեամբ:

Սուրիոյ մէջ կալուած ունեցող արտերկրի մեր հայրենակիցները յաճախ կը մտահոգուին իրենց կալուածներու ճակատագրով, որովհետեւ անհիմն ապատեղեկանք տարածուած է այն ուղղութեամբ թէ ինչ-ինչ պատճառներով պետութիւնը կրնայ ձեռք դրած ըլլալ զաղօղ սեփականատէրերու կալուածներուն վրայ: Արդ, կը լուսաբանենք, որ նման բան գոյութիւն չունի, այսուամենայնիւ մեր հայրենակիցները եթէ որեւէ պատճառով կասկածներ ունենան իրենց կալուածներու իրավիճակին առնչութեամբ, ապա կրնան ցանկացած ժամանակ կալուածային յայտ ստանալով ստուգում կատարել եւ իրենց միտքը հանգստացնել:

95th ANNIVERSARY
ԱՄՆԿ 1928 - 2023

Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տ. Մակար Ս. Նպս. Աշգարեանի Բարեւան Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի

Կապմակերպութեամբ
Համալգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան

ՅՈՒՐԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ
Նուիրում
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 95-ԱՄՆԱՅԻՆ

Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2023-ի երեկոյան ժամը 8:00-ին, «Գիւրգ Նայեան» սրահին ներս, Միլիշմանի, - Հայէպ:

Պրիմալիտ

ՈՐՈ՞Ւ ՎԱՏԱԻԼ



Մարուշ Երամեան

Որո՞ւ կամ ինչի՞ վատահիլ: Գաղափար ունի՞ք Chat GPT կոչուած կիրարկութեան (application) մասին:

Բայց նախքան անոր մասին խօսիլը, թոյլ տուէք յիշեցնել, թէ ոչ շատ հեռու անցեալին, այսինքն 20-րդ դարու կեսերուն, երբ հայ մամուլը բաւական աշխոյժ էր Սփիւռքի մէջ, եւ տակաւին համացանցային լրատուամիջոցները այնքան տարածուած չէին, մարդիկ ի՞նչ անհամբերութեամբ կը սպասէին թերթերուն, ոչ միայն անոնցմէ լուրեր քաղելու, այլեւ մանաւանդ՝ այդ լուրերուն հանդէպ կարծիք կազմելու եւ կեցուածք ճշդելու համար:

Յետոյ մամուլը եկաւ փոխարինել հեռատեսիլը, սփռելով լուրեր, վերլուծումներ ընելով եւ երբեմն նոյնիսկ կարծիք պարտադրելով – անշուշտ



այնպիսի միջոցներով, որոնց մէջ բնաւ երեւելի չէ պարտադրանքը: Յետոյ եկաւ համացանցը: Սկիզբը լաւ էր, դիրքին, արագ եւ հեշտ միջոց էր աշխարհի չորս անկիւններէն, նոյնիսկ ամենէն հեռու վայրերէն լուրեր լսելու եւ կարծիքներ ստանալու:

Յետոյ, կամաց-կամաց անդրադարձանք, որ համացանցը այնքան ալ վատահիլի միջոց չէ, որովհետեւ հոն իրաւն ու սուտը, ճիշդն ու սխալը նոյնքան համոզիչ ձեւով կը ներկայացուին, դժուարացնելով, շատ դժուարացնելով իրաւը սուտէն զատորոշելը:

Եւ հիմա՞ ա՛յս՝ Chat GPT-ին:

Գաղափար ունի՞ք անոր մասին. ես չունեի. ահա թէ ինչպէ՛ս կը բացատրեմ համացանցը այս նորութիւնը.

«Chat GPT-ն AI-ով (Արուեստական Իմաստութիւն) աշխատող լեզուի կիրարկում մըն է, որ մշակուած է OpenAI-ի (բաց Արուեստական Իմաստութիւն) կողմէ եւ որ կարողութիւն ունի մարդու մը նման գրութիւն մը ստեղծելու, անցեալի գրոյցներու եւ համայնութեան վրայ հիմնուելով»:

Այս միջոցով է որ վերջերս համալսարանի ուսանողներ իրենց աւարտաճառերը կը գրեն, եւ նեղ-մասնագիտութեան տէր անձէ մը զատ ոչ ոք կրնայ փաստել, թէ ո՛չ թէ ուսանողը, այլ ... կիրարկումը ինք է որ գրեր է ամբողջ աւարտաճառը:

Նոյն այս կիրարկումը կրնայ ամենէն բարդ հարցումներուն պատասխանել, եւ եթէ հարցնողը չգոհանայ պատասխանով, կրնայ աւելի մանրամասն հարցում ուղղել, եւ կիրարկումը, հնագուէր աշակերտի նման կը պատասխանէ այդ եւ յաջորդաբար եկող որեւէ հարցումի, որեւէ սխալ շուրջ, նոյնիսկ անսպասելի կամուրջներով իրարու անչելով ամբողջովին անկապ սիրեր:

Երկու ընկերներ կը գրուցեն.

– Ի՞նչ է այս Chat GPT ըսուածը:

– Օ՛, շատ հաճելի ծրագիր մըն է. ես անով բանաստեղծութիւն կը գրեմ:

– Իրա՞ւ, – կը գարմանայ եւ քիչ մըն ալ կը նեղանայ խօսակիցը գրական այս «խանդավառութեան» ի տես:

– Այո՛, բանաստեղծութիւններ կը գրեմ եւ կը դրկեմ իմ մտերիմ բարեկամին, որ խորհրդական մըն է. մարդը իրապէ՛ս համոզուած է որ ես կը գրեմ այդ քերթուածները:

Գիտութեան նուաճում մը անշուշտ. «Մերը մենի, գիտութիւն», պիտի ըսեր հայաստանցին:

Բայց ... Եթէ այս այսպէս է, որո՞ւ վատահիլ ուրեմն ասկէ ետք. ո՛չ հեռատեսիլէն լուսածը, ո՛չ համացանցէն իմացուածը, ո՛չ իսկ թերթերուն մէջ գրուածը կրնայ վաւերական ըլլալ, ճշմարիտ ըլլալ:

Chat GPT-ի օգտագործումը՝ հարցերուն պատասխանելու, բովանդակութիւն ստեղծելու, կանոնաւորող (code) ծրագիրներ եւ այլ սովորական առաջադրանքներ կատարելու համար, ընդհանուր առմամբ անվտանգ է, եթէ ուշադրութիւն դարձնէք ձեր տարածած տեղեկատուութեան: Այս կիրարկումին ետեւ կեցող ընկերութիւնը՝ OpenAI-ը՝ անվտանգութեան բազմաթիւ միջոցներ կ'օգտագործէ, գայն ճիշդ օգտագործելու եւ անկէ ծնած կամ ծնելիք վտանգները նուազագոյնի իջեցնելու համար: Այսպէս կ'ըսէ

կիրարկումը ինք, երբ այդ մասին հարցում տաս իրեն: Կարելի՞ է վատահիլ սակայն կիրարկումի մը, որուն գլխաւոր առաջադրութիւնը մարդկային ուղեղը կապկելն է: Թե՞ արդեօք հարցումը սխալ կը ձեւակերպեմ:

Ինչպէս այլ կիրարկումներ, Chat GPT-ն եւս սկսած է զարգանալ եւ հիմնարդէն կրնայ ինքնուրոյն ձեւով (կարելի՞ է հասկնալ՝ ինքնագլուխ) գրութիւն, պատկերներ, ձայներ, ծրագրային ապահովում եւ այլ թուային միջոցներ (media) արտադրել:

– Յեղափոխական նուաճում մըն է ասիկա գիտութեան մէջ, բայց ... կարելի չէ անոր 100% վատահիլ. շատ զգոյշ ըլլալու է, որովհետեւ տեղեկութիւնները որոնք կու տայ, ճիշդ կը հնչեն, բայց թէ՛ ընդհանուրին, թէ՛ մանրամասնութեան մէջ կրնան ճիշդ չըլլալ, – կ'ըսէ մասնագետ մը:

«Ճիշդ կը հնչեն» խօսքը շատ զիլ կը հնչէ ականջիս, ցաւցնելու չափ զիլ, թէեւ պարզօրէն ըսուած է, եւ կը խտացնէ այս դարուն մեծագոյն թերութիւնը, որ կրնայ նաեւ որպէս յատկութիւն երեւիլ. որովհետեւ այսօր ոչ ոք պատրաստակամ է հարցերուն եւ երեւոյթներուն խորքը հասնելու, խորքայինը նկատի առնելու. գրեթէ ամէն մարդ կը գոհանայ երեւութականով եւ իր ըսելիք-ընելիք-գրելիքը կը հիմնէ անոր վրայ ...

Լաւը այն է, որ երբ կը հարցնես նոյն ինքն այս կիրարկումին, թէ ի՞նչ է ն իր յատկութիւններն ու թերութիւնները, ինք ամենայն անկեղծութեամբ կը պատասխանէ.

«– Ժամանակի ինսայողութիւն.

– Կը յուշէ այն, ինչ որ հարկաւոր է բան մը սկսելու համար ...

– Գրաւոր օգնութիւն.

– Գրելու հետ կապուած բոլոր հարցերուն Chat GPT-ն կրնայ պատասխան տալ.

– Ուսուցում + կատարելագործում.

– Չափէն աւելի վատահոլութիւն.

– Կը սահմանափակէ ստեղծագործութիւնը.

– Բանագողութիւն»:

Այլ հարցում մը ինքզինք կը զգացնէ՝ ի՞նչ է ամնչութիւնը ասոր եւ Արհեստական Իմաստութեան (Artificial Intelligence), եթէ ընդհանրապէս ամնչութիւն կայ:

Նոամ Չոմսքի, հրեայ-ամերիկացի լեզուաբանը, որ նաեւ հիմնադիրներէն մէկն է ճանաչողական գիտութիւններու, քաղաքական աշխոյժ քաղաքագետ մըն է, ընկերային քննադատ մըն է. ընդդիմադիր՝ Իսրայէլի պաղեստինեան քաղաքականութեան, կ'ըսէ.

«Մարդուն ուղեղը ChatGPT-ի եւ մնացեալ գործիքներուն նման չէ, որ կրնայ տեղեկատուական հարիւրաւոր թերապայթ կու տալ, ամենէն տրամաբանական պատասխանը տալու համար գիտական հարցումի մը»:

«Ճիշդ հակառակը՝ մարդկային ուղեղը արդիւնաւետ եւ նուրբ համակարգ մըն է, որ կրնայ սահմանափակ տուեալներով ալ բանիլ»:

«Յետեւաբար, կ'ըսէ հեղինակը, պէտք է դադրիք Արուեստական Իմաստութիւն կոչելէ այս կիրարկումը, եւ անոր տանք իր ճշգրիտ ըրածին անունը՝ «բանագողական ծրագիր», որովհետեւ այդ ծրագիրը ոչ ինչ կը ստեղծէ, պարզապէս կ'ընտրի անկէ արուեստագետներու գործերը եւ կը ձեւափոխէ գանոնք այնքան եւ այնպէս, որ կարելի ըլլայ խուսափիլ իրաւունքներու կանոններէն: Այս ծրագիրը եւրոպացիներուն Ամերիկայի գրաւումէն ետք մտային սեփականութեան մեծագոյն գողութիւնն է» (Noam Chomsky, New York Times - 8. March 2023):

Անշուշտ Չոմսքիի ձայնը հազիւ թէ կը լսուի համաշխարհային «խանդավառութեան» եւ թոհուրոհին մէջ: Մարդիկ կը շարունակեն սքանչանալ նման ծրագիրներով եւ օգտագործել գանոնք, առանց անդրադառնալու շատ եական խնդիրի մը՝ վատահոլութեան ...

Պահ մը կը թուի, թէ բոլորս ալ խաղալիքներ ենք այս ծրագիրներուն ճանկը ինկած:

Այս բոլորը գիտնալէ ետք՝ որո՞ւ վատահիլ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբոջեան-Պողիկեան

Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոմեան-Առաքելեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյեան

Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան

Վրաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան

Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան

Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբոջեան

Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

– Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:

– Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

– Խմբագրատուն ուղարկուած սիրերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

– Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

– Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ՎԵՀՎՓԱԹ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ՝ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԹՅՈՒՆ ԿՐԻՏԻԿՈՒԹՅՈՒՆ

Երկուշաբթի, 20 Նոյեմբեր 2023-ին, միացեալ Նախագահութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միջեկեղեցական Խորհուրդին եւ Ս. Վլատիմիր աստուածաբանական դպրեվանքին, կայացաւ միջեկեղեցական հարցերու քննարկման նուիրուած հանդիպում մը յիշեալ դպրեվանքի յարկին տակ: Ներկայ էին թէ՛ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ թէ Խորհուրդի գործունէութեան իրենց հետեւողական մասնակցութիւնը բերած ամերիկաքննարկող հոգեւորականներ ու համալսարանական դասախօսներ:



Նկատի ունենալով Վեհափառ Հայրապետին երկար տարիներու փորձառութիւնը միջ-եկեղեցական աշխարհին մէջ, ան հրաւիրուած էր իր տեսակետները եւ պատկերացումները յայտնելու:


Նորին Սրբութիւնը հինգ կէտերու մէջ պարզեց միջ-եկեղեցական շարժումին դիմագրաւած մարտահրաւերները. - անհատակեղորոն շարժումէն դէպի եկեղեցակեղորոն շարժում. ուղղափառ եկեղեցիներու մտահոգութիւնները դէպի աշխարհայնացում ուղղուող միջ-եկեղեցական շարժումին նկատմամբ. բազմակողմանի գործակցութեան նահանջը երկկողմանի գործակցութեան դիմաց. աստուածաբանական երկխօսութեան տիրապետող ներկայութիւնը միջ-եկեղեցական շարժումին մէջ. եկեղեցւոյ միութեան լուսանցքայնացումը ընկերաբարոյական խնդիրներու հետոյ հետոյ ծաւալող ներկայութեան դիմաց:

Յիշեալ հարցերուն գծով Հայրապետը տուաւ անհրաժեշտ բացատրութիւններ ու միաժամանակ կատարեց վերլուծումներ: Ապա, ան պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Ներկաները ճաշի հիւրերը եղան Ամերիկայի Միջ-եկեղեցական Խորհուրդին եւ Ս. Վլատիմիր աստուածաբանական դպրեվանքին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ՀՅԴ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԴՐՕՇԱԿ»-Ի 2023-Ի 11-ՐԴ ԹԻՒԸ

Համացանցի վրայ ներկայացուող «Դրօշակ» պարբերականի նոր թիւը ունի թեմաթիկ (ընտրական «Գ.») բնոյթ՝ անկախ ամբողջովին նուիրուած է Սփիւռքի հիմնահարցերուն, վերակազմակերպումին եւ գարգացման հարցերուն, ինչպէս եւ Հայրենիք-Սփիւռք փոխարարութիւններուն, ընդհանուր ռազմավարութեան ու նպատակներուն: Յօդուածներու հեղինակները, ըլլալով Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքի տարբեր համայնքներէն, կլոր սեղանի շրջանակով տեսակետներ յայտնած են առաջադրուած հարցերուն մասին, կարծիքներ կը ներկայացնեն այլ հեղինակներու տեսակետներուն շուրջ:



Կլոր սեղանի ձեւաչափով այս քննարկումը տեղի ունեցած է որոշակի ժամանակահատուածի մէջ եւ սկիզբ առած է այն ժամանակ, երբ տակաւին տեղի չէր ունեցած Արցախի բռնագրաւելու եւ հայաթափելու ցեղասպանական գործողութիւնը: Համարի լոյս ընծայումէն առաջ խմբագրակազմը անդրադարձած է այս իրողութեան եւ որոշած է եղած յօդուածները լոյս ընծայել այնպէս ինչպէս կան, երբ մասնաւորապէս, հրապարակուած նիւթերուն մէջ, բնականօրէն, կը բացակային մեծ ողբերգութեան արձագանքները:

Ձեռնամուխ ըլլալով այս նախաձեռնութեան, պաշտօնաթերթի խմբագրակազմը նկատի ունեցաւ կուտակուած հիմնահարցերը եւ կ'ակնկալէ, որ սկսելով այս համագային նշանակութեան խօսակցութիւնը կրնայ խթանել անոր ծաւալումին եւ արդիւնաւետ լուծումներու որոնումին: Տարբեր մայրացամաքներու երկիրներ ներկայացնող յօդուածներու հեղինակները կուսակցական եւ ոչ-կուսակցական մտաւորականներ են, մտորումներով բաժնեկցած է նաեւ հոգեւոր դասու ներկայացուցիչը: Բոլոր այս յարգարժան անհատները կարելիութիւն ունեցած են ազատօրէն ներկայացնելու իրենց արժեւորումներն ու տեսակետները:

«Դրօշակի» խմբագրակազմը կ'ակնկալէ, որ սկիզբ առած խօսակցութիւնը կ'ունենայ շարունակութիւն՝ ներգրաւելով հայրենի եւ սփիւռքահայ այլ անուանի մտաւորականներն ու գործիչները, որոնց տեսակետներուն համար յառաջիկային եւս պաշտօնաթերթը սիրով պիտի տրամադրէ իր ամպիոնը:

Ո՞Վ ԿՐ ՎԱԽՆԱՅ...

Սկիզբ՝ էջ 5

թիւներուն քաղաքական վարքագիծը, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կը յանդակին քանդել մեր հոգեղէն ազգային բերդը:

Երբ «ազգային» գաղափարը կ'ընդգծեմ, միշտ հեռու կը մնամ նացիական-ֆաշական իմաստներէն:

Վերջերս ականջալուր եղանք, որ Հայաստանի վարժարաններուն 7-րդ կարգերուն համար պատրաստուած հայոց պատմութեան դասագիրքերուն մէջէն վերցուած ու խեղաթիւրուած են այնպիսի իրողութիւններ, որոնք կու գան ջուր լեցնելու թշնամիին ձգտումներուն, որոնք կ'աշխատին կասկածի տակ առնել հայկականն ու հայութիւնը: Թշնամին գիշեր ու ցերեկ, հետեւողականօրէն կ'աշխատի խեղաթիւրել հայոց պատմութեան իրողութիւնները, ատելի՛ն. կ'աշխատի վերացնել հայութիւնն ու Հայաստանը: Իսկ մենք ասոր դիմաց, փոխանակ ամրապնդելու մեր հոգեմտաւոր բերդը, զայն մաս առ մաս կը փլուզենք:

Այսպէս, թշնամին մեր կրթական համակարգը ողողած է հակահայ շինծու գաղափարներով: Օր ու գիշեր կը քանդէ մեր ազգային հարստութիւնները, եկեղեցիները, խաչքարերը, պատմական կոթողները: Պատմութիւնը խեղաթիւրելով՝ Երեւանը կ'անուանափոխէ Երիվան (կամ Իրիվան) ու կոչ կ'ընէ զայն բռնագրաւելով իւրացնելու, ա՛լ ինչ խօսք բարձրիկ Սեւանին մասին: Թշնամին կ'իւրացնէ մեր երգը, պարը՝ հասնելով մինչեւ մեր խոհանոցը: Իսկ մենք ի՞նչ կ'ընենք մեր ինքնութեան միջնաբերդը՝ հայոց պատմութիւնը, մեր պաշտպանողական հզօրագոյն աշտարակը կանգուն պահելու:

Գրութիւնս չեմ ուզեր ծանրաբեռնել քաղաքական վերլուծումներով. զանոնք իմս չեմ սեպեր, այլ կը թողում քաղաքագետներուն:

Սակայն, որպէս հայ, որպէս ազգային ու դաշնակցական հայեցակարգի տեր անձ, հաւատացած եմ, որ մեր ազգային գաղափարախօսութիւնն է, որ ահ ու սարսափ կը պատճառէ ներսի թէ դուրսի թշնամիներուն: Եւ անոր համար է, որ անոնք հարուածները կ'ուղղուին այդ գաղափարախօսութեան: Անոր համար է, որ անոնք կը վախնան «հոգեղէն» Դաշնակցութենէն:

Երբ «հայեր ենք», կ'ըսենք, ալ ի՞նչ գաղափարախօսութեան պարտիք ծառայել, «կեր, արք ու լեր» գաղափարախօսութեամբ, թե՞ «Ոյ աման, ոյ աման, թագաւոր լինելուց լաւ բան, կեր-խմի քէֆ արա շարունակ, աշխարհը խալի է, ոտքիդ տակ»:

Այստեղ անելորդ չեմ նկատեր մէջբերել Միացեալ Նահանգներու նախագահներէն Ռոլանտ Ռիկընի մէկ նշանաւոր ճառը:

Ճշգրիտ թուականը չեմ կրնար մտաբերել, սակայն Իսրայելի կողմէ Լիբանանի բռնագրաւումի տարիներուն էր, երբ Լիբանանեան դիմադրութիւնը, որուն մէջ գերակշիռ տեղ գրաւած էին շիի դաւանանքին պատկանող մարտիկներ, եւ անոնք անձնասպանական արարքներով կը պայքարէին Լիբանանէն հեռացնելու Իսրայելի բանակը: Այդ ժամանակահատուածին կը գուցադիպէր իր ճառը:

Ան մօտաւորապէս այսպէս կ'արտայայտուէր. - Մենք ամէն ինչ կ'ընենք, որ մեր գիւնդներուն կէտքը ապահովենք՝ զանոնք լաւապէս սպառազինելով, մինչ անոնք մահը առած են որպէս ռազմավարական, դաշնակից՝ իրենց նպատակին հասնելու համար, որուն դէմ մենք համարեա՛նք անգօր ենք:

Այսինքն ան կ'ակնարկէր, որ անոնք գաղափարի մարտիկներ էին՝ հայրենիքի թէ կրօնի գաղափարախօսութեամբ տոգորուած: Ու անոնք յարթեցին. մահուամբ զմահ կոխելով՝ Լիբանանէն դուրս շարժեցին թշնամին ու ցայսօր կը պայքարին գուցէ նուազ քան 200 քառ. քմ գրաւուած տարածքները ազատագրելու: Տեսէ՛ք անցնող օրերուն անոնց կատարած հերոսութիւններն ու սիրանքները՝ ի գօրակցութիւն Պաղեստինի իրենց եղբայրներուն: Այլ խօսքով, իրենց որդեգրած գաղափարախօսութիւնը (1980-ական թուականներէն) զանոնք մղեց հասնելու յաղթանակի, ու թշնամին ցայսօր կը պահեն սարսափի մէջ:

Իրենց ազգային-կրօնական-հայրենասիրական գաղափարախօսութիւնը ոչ միայն անառիկ բերդի վերածեց գիրենք, այլ նաեւ մղեց, որ ստանան կամ ստեղծեն այն մոզական գէնքերը, միջոցները, որպէսզի երեկուան հեքիաթային-յաղթական թշնամին այսօր բռնէ եթէ ոչ պարտութեան, այլ գոնէ ինքնապաշտպանութեան ճանապարհը:

Չարտուղի հարցադրում մըն ալ անցնելով՝ Լիբանանի այդ թշնամին (եւ պաղեստինցիներուն թշնամին) ան չէ՛ր, որ զինեց մեր արեւելեան ոսոխը, որ ոտնատակ ըրաւ մեր Արցախ հայրենիքը:

Հասունցած չէ՞ պահը հաւաքուելու, բոլորուելու մեր ազգային գաղափարախօսութեան շուրջ, թէկուզ՝ իւրաքանչիւրը իր երանգներով, հայութեան անխորտակելի միջնաբերդին շուրջ:

Նորէն հարց կու տամ.

«Ո՞վ կը վախնայ ՀՅԴ-էն»:

Որպէս վերջաբան. վերոյիշեալ խորագիրը տեսնողը պահ մը կրնայ հարց տալ, թէ այս օրերուն ինչո՞ւ այս վերնագիրը:

Գուցէ գտնուին մարդիկ, որոնք քմծիծաղով կարդան, թերեւս գայրացողներ ըլլան, ծիծաղողներ ու հեգնողներ ալ, կամ՝ պարսաւողներ:

Բայց անպայման պիտի ըլլան յարգելիներ, որոնք նոյն ցաւով կը տառապին:

Սակայն կը մնայ մեր միջնաբերդը՝ ազգային գաղափարախօսութիւնը, Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը:

Այդ մէկն ալ՝ ահ ու վախ պատճառողը:

ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ԹԵՐԹԸ ԿՐ ՅԱՐՉԱԿԻ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՎՐԱՅ՝ ԼՈՊԻՒՆԿԻ ԳԾՈՎ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՎԱՏՆԱԾ ՄԻԼԻԱՌՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ



Յարութ Սասունեան

Անցեալ շաբաթ Alpha News հեռատեսիլային ընկերութիւնը ինձմէ խընդրեց մեկնաբանել ԱՄՆ Ծերակոյտի միաձայն որոշումը (100 կողմ, 0 դէմ ձայներու յարաբերակցութեամբ), որ երկու տարիով պիտի կասեցնէ նախագահ Ըօ Պայտընի իրաւասութիւնը՝ շրջանցելու համար Միացեալ Նահանգներու ազատութեան աջակցութեան քթի 907-րդ յօդուածը, որ կ'արգիլէ օգնութիւն տրամադրել Ատրպէյճանի: Եթէ Ներկայացուցիչներու Պալատը նոյնպէս հաւանութիւն տայ այս օրինագիծին, ապա անկախ կ'ուղարկուի Նախագահին՝ ստորագրելու համար, որմէ ետք օրէնքի ուժ կը ստանայ: 1992-էն ի վեր, ԱՄՆ բոլոր նախագահները, ներառեալ նախագահ Պայտըն՝ իր պաշտօնավարման վերջին երկու տարիներուն, շրջանցած են 907-րդ յօդուածը՝ այսպիսով տասնեակ միլիոնաւոր տոլարներու օգնութիւն տրամադրելով Ատրպէյճանի:

Ծերակոյտի որոշումը գայրացուցած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը, որ գայն որակած է հարուած՝ ուղղուած հայ-ատրպէյճանական յարաբերութիւններուն եւ ջնջած է իր մասնակցութիւնը՝ 20 Նոյեմբերին Նախատեսուած Ուաշինկթընի բանակցութիւններուն, երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներու միջեւ:

Alpha News-ին տուած հարցազրոյցի ժամանակ, ես յայտարարեցի, որ ոչ մէկ ամերիկացի Ծերակոյտ դէմ եղած է հակաատրպէյճանական օրինագիծին, թէւ Ատրպէյճան վարձած է լրագրատական բազմաթիւ մեծ ընկերութիւններ՝ Ուաշինկթընի մէջ իր շահերը պաշտպանելու համար: Ասիկա կը նշանակէ, որ վերջին երկու տասնամեակներու ընթացքին Ատրպէյճան վատնած է տասնեակ միլիոնաւոր տոլարներ՝ վճարելով լրագրատական այդ անօգուտ ընկերութիւններուն: Աւելցնեմ, որ այս լրագրատական ընկերութիւններու աշխատանքը վերահսկելու անմիջական պատասխանատուն Ուաշինկթընի մէջ Ատրպէյճանի դեսպան հազար Իպրահիմն է: Զետեաբար, որեւէ կառավարութիւն, որ կ'իմանայ նման հսկայական գումարներու վատնումի մասին, անմիջապէս ազատ կ'արձակէ իր դեսպանը: Եթէ նախագահ Ալիեւ ազատ չարձակէ դեսպան Իպրահիմնը, ուրեմն ան նոյնքան պատասխանատու կը համարուի լրագրատական անօգուտ ընկերութիւններու վրայ միլիոնաւոր տոլարներու վատնման համար: Յստակ է, որ անոնք չեն կրցած համոզել 100-ի վրայ գոնէ մէկ ծերակուտական, որ քուէարկէր յօդուած Ատրպէյճանի:



Alpha News-ին տուած հարցազրոյցէն քանի մը օր անց, Ատրպէյճանի առաջին անգլիալեզու թերթը՝ AzerNews, հրապարակեց ծաւալուն յօդուած՝ «Կաշառք տալով ծերակուտականներուն, հայկական լրագրատական կը ներկայացնէ երեւանի ապագային համար» վերնագիրով, յարձակելով անձամբ իմ վրայ՝ այն բանի համար, որ յայտարարած եմ՝ Ատրպէյճանը միլիոնաւոր տոլարներ վատնած է լրագրատական վրայ: Ահա թէ ինչպէ՛ս կը վարուին անամօթ մարդիկ, երբ ուրիշները կը մեղադրեն այնպիսի բաներու համար, որոնց գծով իրենք են մեղաւոր:

Ամբողջ աշխարհը տեղեակ է Ատրպէյճանի տխրահռչակ «խաւիարային դիւանագիտութեան» եւ ատրպէյճանական դրամներու լուացման մասին, որ միլիառաւոր տոլարներով կը կաշառէ քաղաքական գործիչները ամբողջ Եւրոպայի մէջ՝ յօգուտ Ատրպէյճանի քուէներ տալու համար, մարդկային իրաւունքներու ծիրէն ներս Ատրպէյճանի կոպիտ խախտումները եւ նախագահական կեղծ ընտրութիւնները արդարացնելու նպատակով:

AzerNews անամօթաբար կը յայտարարէ, որ «արտերկրի մէջ Յայաստանի լրագրատական կազմակերպութիւնները միլիոններ, թերեւս ալ միլիարդներ կը լեցնեն քուէարկականներու գրպանները, ուստի, Արեւմուտքէն կը ինչչեն անհիմն եւ կողմնակալ կարծիքներ, ընդդէմ Ատրպէյճանի»:

Վերոնշեալ նախադասութեան մէջ կան քանի մը լուրջ սխալներ: Նախ, Յայաստանի կառավարութիւնը ոչ մէկ ամերիկեան լրագրատական ընկերութիւն վարձած է, պարզապէս այն պատճառով, որ չունի հսկայական այն նախադասութիւնները, զորս ունի Ատրպէյճան, եւ որ կը վատնէ գանձը Ուաշինկթընի մէջ լրագրատական ընկերութիւններու վրայ՝ իր երկրին մէջ իր աղքատ ժողովուրդին հոգ տանելու փոխարէն: Երկրորդ, ամերիկահայ կազմակերպութիւնները միլիոնաւոր, ա՛լ չըսած՝ միլիառաւոր տոլարներ չունին, որ «լեցնեն քուէարկականներու գրպանները»: Ամերիկահայերը պէտք չունին կաշառելու ոեւէ մէկը: Երբ քու գործը արդար է, դուն կարիք չունիս ոեւէ մէկը կաշառելու՝ գայն ճշմարտութեան մէջ համոզելու համար: Միայն այն պարագային, երբ դուն գանգուածային յանցագործութիւններ կը կատարես, ինչպէս բազմիցս կ'ընեն Ատրպէյճան եւ Թուրքիա, պէտք է միլիոնաւոր ու միլիառաւոր տոլարներ ծախսես յանցագործութիւններդ ծած-

կելու համար:

Այնուհետեւ, AzerNews մեղադրած է Ատրպէյճանը՝ ըսելով, որ Պաքուն «ոչ միայն հետաքրքրուած է մասնակցելու գործընկերութեան որոնման այս ածուրդին, գոր Յայաստան շռայլօրէն կ'ընէ հիմա»: Թէւ այս նախադասութիւնը քերականօրէն սխալ կազմուած է, ատրպէյճանցի գրողը կարծես թէ կ'ընդունի, որ Ատրպէյճան կը ձգտի կաշառել օտարերկրեայ պաշտօնեաները: Ասիկա անօգուտ յայտարարութիւն է, քանի որ Ատրպէյճան տարիներ շարունակ արդէն կը կաշառէ օտարերկրեայ պաշտօնեաները:

Ատրպէյճան աշխարհի ամենէն վերջին երկիրն է, որ կրնայ գրպարտել Յայաստանը կամ որեւէ երկիր, քանի որ Պաքուն կը ղեկավարէ բռնապետ մը, որ կը բանտարկէ լրագրողները եւ իրաւապաշտպանները, իսկ անոր զինուորները նողկալի ռազմական յանցագործութիւններ կը կատարեն, ինչպիսիք են բռնաբարութիւնները եւ գլխատումները: Ատրպէյճան ներխուժած է Արցախ եւ ցեղասպանութիւն իրագործած հայ բնակչութեան հանդէպ: Աւելին, ատրպէյճանցի զինուոր Ռամիլ Սաֆարով, Զուլգարիոյ մէջ, ՆԱԹՕ-ի կազմակերպած ուսումնական սեմինարի մը ընթացքին կացնահարեց քնացած հայ զինուորը՝ գայն բանտէն ազատելու համար, իսկ յետոյ ներսը շնորհեց անոր եւ գայն հռչակեց ազգային հերոս:

Ես շնորհակալ եմ AzerNews-ին՝ Կլենտոնի մէջ (Քալիֆորնիա) իմ տուած հարցազրոյցին Պաքուն ուշի-ուշով հետեւելու եւ անհիմն ու կեղծ պատասխաններ գրելու համար: Յօդուածագիրը՝ AzerNews-ի գլխաւոր խմբագրի տեղակալ Էլնուր Էնվերօղլու, շատ ջանքեր գործադրած է ոչ միայն հեռատեսիլային հարցազրոյց գտնելու, այլեւ գայն հայերէն անգլերէն թարգմանելու համար:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

Տեղական Լրագր (1)

Սկիզբ՝ էջ 2

Իր կարգին ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ պատուիրակութեան երեսփոխանական բանբեր դոկտ. Գաբրիէլ Սանտի շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն պետութիւններուն, որոնք քուէարկեցին ի նպաստ բանաձեւին, շեշտելով իրենց հաւատարմութիւնը միջազգային օրէնքին եւ ՄԱԿ-ի պայմանագիրին, մեկնելով հողերը բռնագրաւելու եւ ժողովուրդը բռնատիրութեան ենթարկելու մերժման սկզբունքներէն:

Տեղական Լրագր (2)

Սկիզբ՝ էջ 2

Իր կարգին, դոկտ. Նաճի յայտնեց, որ Պաղեստինի ժողովուրդը դժուար պայմաններու մէջ կը գտնուի ներկայիս, ապա շնորհակալութիւն յայտնեց Սուրիոյ եւ բոլոր պայքարող երկիրներուն՝ Պաղեստինեան Դատին իրենց մնայուն եւ սկզբունքային գորակցութեան համար:

Դոկտ. Նաճի շեշտեց, որ Պաղեստինի ժողովուրդը պիտի շարունակէ իր պայքարը իսրայէլեան շարդերուն եւ ցեղապաշտ բռնատիրութեան դէմ, որոնց նպատակն է Պաղեստինեան Դատը փակել մէկընդմիջտ, որպէսզի Իսրայէլ յաջողի անկախ պետութիւն հիմնել, իսկ անոր մայրաքաղաքը Երուսաղէմը դարձնել:

Տեղական Լրագր (4)

Սկիզբ՝ էջ 2

Կարգ մը կետերուն վրայ իսրայէլեան գրոհին հետեւանքով, օդակայանը ծառայութենէ դուրս եկաւ եւ ՄԱԿ-ի մարդասիրական թռիչքները դադրեցան:

Նախարարութիւնը եզրափակելով շեշտեց, որ Սուրիա կը զգուշացնէ Իսրայէլը Սուրիոյ, Պաղեստինի եւ հարաւային Լիբանանի վրայ իր յարձակումներէն, սպառնալով անոր կրել իր գրոհին ծանր հետեւանքները:

Տեղական Լրագր (5)

Սկիզբ՝ էջ 2

թիւն կը ստեղծէ եւ միջազգային օրէնքը կը խախտէ:

Նախարարութիւնը ավելցուց, որ այս յարձակումը տեղի կ'ունենայ Պաղեստինի ժողովուրդին դէմ Իսրայէլի իրագործած պատերազմական ոճիրներուն շրջագիծին մէջ: Աւելցնելով որ միևնույն օրս հազարաւոր նահատակներ եւ ենթակառուցներու ահաւոր քանդումներ արձանագրուեցան Կազգայի մէջ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Մտերիմ բարեկամի մը այցելութիւնը մեծապէս պիտի խանդավառէ ձեզ: Մեծ յաջողութիւն մը պիտի ունենաք այս շաբաթ:



Ցուլ

Բարձրունքներ պիտի նուաճէք եւ ձեր երազները պիտի իրականացնէք: Հարազատներ պիտի պարգեւատրեն ձեզ՝ խնճոյքի սեղան մը սարքելով:



Երկուորեակ

Ձեր առողջութեան հետամուտ եղէ՞ք եւ յաճախ բժիշկին դիմեցէ՞ք: Ձեր բարեկամները մտահոգուած են ձեզմով: Գնահատեցէ՞ք զանոնք:



Խեցգետին

Լուրջ խնդիրներուն լուծումը պիտի գտնէք: Հիանալի էք: Նոյն թափով յարատեւեցէ՞ք:



Առիծ

Սրտնեղութիւն մը ունիք, բայց ժամանակի ընթացքին պիտի փարատի: Քաջասիրտ եղէ՞ք եւ յոյս ներշնչեցէ՞ք ձեր շրջապատին:



Կոյս

Մի՛ յուսահատիք: Ձախորդութիւնները շուտով պիտի հեռանան: Նոր յոյսերով պատրաստուեցէ՞ք դիմաւորելու յառաջիկայ շրջանը:



Կշիռք

Կասկածամիտ էք, բայց՝ բարի ու հաւատարիմ: Մարդիկ ձեր կարծիքը պիտի յարգեն եւ դուք գովասանքի խօսքեր պիտի լսէք: Չուարճացէ՞ք:



Կարիճ

Նիւթական ներդրում մը անակնկալօրէն պիտի թակէ ձեր դուռը: Լաւատես եղէ՞ք եւ համբերութեամբ պայքարեցէ՞ք իրականացնելու ձեր երազները:



Աղեղնաւոր

Մօտիկ բարեկամի մը վիրաւորական խօսքերը պիտի յուսահատեցնեն ձեզ: Քաջալերուեցէ՞ք եւ ամուր մնացէ՞ք, որպէսզի յաջողիք:



Այծեղջիւր

Ձեր առողջութեան հոգ տարէ՞ք, որպէսզի բարոյութիւններու չհանդիպիք: Մարգաստի յաճախելը ձեր հոգեկան աշխարհին ալ պիտի բարելաւէ:



Ջրհոս

Նիւթական մտնումներ մի՛ կատարէք: Անհրաժեշտ իրեր գնելով բաւարարուեցէ՞ք: Շաբաթը լի է ընկերային հանդիպումներով:



Ջուկ

Մեծ նուէր մը պիտի ստանաք ձեր սիրելիին: Յարգանք ու սեր ցուցաբերեցէ՞ք անոր հանդէպ: Գործի մէջ ալ աւելի զգուշութեամբ աշխատեցէ՞ք, որպէսզի չսխալիք:



ԻՆՉՊԷՍ ՄՆԱՆԻԼ ՉՄՐԱՆ՝ ՈՐՊԵՍՋԻ ԱՌՈՂՋ ՄՆԱՆՔ ՈՒ ՉԳԻՐՆԱՆՔ

Սննդագետներ կը թելադրեն ձմերան եղանակին օգտագործել անխաջրերով հարուստ ուտեստներէն, նախապատուութիւնը տալով ոչ թէ շաքարաւազով պատրաստուած քաղցրեղէնին ու խմորեղէնին, այլ՝ հացահատիկներով պատրաստուած ուտեստին, որ աւելի առողջապահական է:



Ցուրտ ամիսներուն, երբ հիւանդանալու վտանգը աւելի մեծ է, օրկաւիզ մի դիմադրողականութեան բարձրացման համար անհրաժեշտ են սպիտակուցներն ու կենսանիւթերը՝ C կենսանիւթ, A կենսանիւթ, ֆոլաթթու եւ այլն:

C կենսանիւթի լաւագոյն աղբիւրը կը համարուին պղպեղը, կանաչեղէնը, կաղամբը, նարինջը, մանտարինը, արքայանարինջը, խնձորը, պրոքուիսն եւ կոճապղպեղը: Կարելի է օգտագործել նաեւ թթուաշերտ, որոնք թաղանթանիւթ կը պարունակեն ու մարսողութեան կ'օգնեն:

Ցուրտ օրերուն առատօրէն կարելի է օգտագործել բանջարեղէնով կամ ոսպի ու սունկի տեսակներով ապուրներ, առանց իւղ աւելցնելու անոնց, այլ իւղը փոխարինելով ձիթափուղով կամ մէկ ապուրի դգալ կարագով:



Թեյի տեսակները կարելի է օգտագործել օրական քանակի մը անգամ, սակայն շաքարաւազին փոխարէն թէյին մաքուր մեղր աւելցնել, կամ թէյին հետ արմաւ կամ տուրմ ուտել: Անհրաժեշտ է ճերմակ շաքարաւազի օգտագործումը նուազագոյնի իջեցնել եւ գայն փոխարինել առողջապահական քաղցրեղէնով:

Սննդագետներ խորհուրդ կու տան թէյը կամ սուրճը օգտագործել ուտելէն մէկ ժամ առաջ կամ կէս ժամ վերջ, որպէսզի անոնց պարունակող քաֆէինը սնունդի ներծծման արգելք չհանդիսանայ:

Ձմրան հարկ է առատօրէն օգտագործել նաեւ արմատաւոր բանջարեղէն, ինչպէս՝ ճակընդեղ, ստեպիլին, կանաչ սոխ, կանաչ սխտոր, շագանակ եւ այլն:

Ձմրան հարկ է առատօրէն օգտագործել նաեւ արմատաւոր բանջարեղէն, ինչպէս՝ ճակընդեղ, ստեպիլին, կանաչ սոխ, կանաչ սխտոր, շագանակ եւ այլն:

Խոհագիր

ՊԻՍՏԱԿԵՂԵՆՈՎ ԱՐՄԱԻ

Առողջապահական քաղցրաւենի մը պատրաստելու եւ ձեր ընտանիքի անդամներուն սննդարար պատահիկներ հրամցնելու համար եկէ՞ք միասնաբար պատրաստենք պիստակեղէնով արմաւ՝ ձեր նախընտրած պիստակեղէնը օգտագործելով:

- Բաղադրութիւն**
- 4 ապուրի դգալ մակրուած նուշ
 - 4 ապուրի դգալ մակրուած գետնանոյշ (Ապիտ)
 - 4 ապուրի դգալ կնճիթ (շուշմայ)
 - 4 ապուրի դգալ ընկոյզ
 - 0,5 քիլօ շաղուած արմաւ



Պատրաստութիւն

Պիստակեղէնի խառնուրդը մանրելու համար գայն ծածկել թափանցիկ թուղթով մը եւ քլանով լայնքին ճնշելով տրորել, որպէսզի միջակ մեծութեամբ կտորներու վերածուի:

Տապակի մը մէջ 2 ապուրի դգալ իւղ կամ կարագ դնել եւ ցած կրակի վրայ հալեցնել, ապա պիստակեղէնը աւելցնել ու խարկել, մինչեւ որ ոսկեգոյն դառնայ:

Աւելցնել շաղուած արմաւը եւ շարունակ խառնել պիստակեղէնին եւ իւղին հետ մինչեւ որ միատարր գանգուածի վերածուի:

Ապա տապակէն դուրս բերել, շաղել եւ 15-20 սմ. լայնքով երկու կամ երեք երկար շերտերու վերածել, որպէսզի իւրաքանչիւր բաժին կարելի ըլլայ սահուն գանգուածի մը վերածել: Ապա իւրաքանչիւրին վրայ ցանել մակրուած ընկոյզ, կասիա եւ շուշմայ:

Կլոր հաւասար շերտերով կտրտել զանոնք եւ հիւրասիրել: Բարի ախորժակ:



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Հալեպի ֆուտբոլի երիտասարդ կազմի ախոյեանության առաջին փուլի մրցումներուն, ՅՄԸՄ-ի խումբը 1 - 0 արդիւնքով կրցաւ պարտութեան մատնել Նէյրապը: Խումբին միակ կոլը նշանակեց Յովիկ Տէր Պօղոսեան:



-Սուրիոյ պասքէթի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանության երրորդ փուլի մրցումներուն, ՅՄԸՄ-ի աղջկանց կազմը 59 - 40 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Ճալաաէն:

-Սուրիոյ պասքէթի աղջկանց Բ. դասակարգի մրցումներուն ՅԵԸ-ի կազմը յաջողեցաւ յաղթական աւարտել իր առաջին մրցումը՝ 53 - 51 արդիւնքով պարտութեան մատնելով Սալամիյէն:

-Սուրիոյ ֆուտբոլի ախոյեանության Ա. դասակարգի մրցումներուն, Հալեպի գոյգ կազմերը՝ Ահլին եւ Հուրիէն շարունակելով իրենց ձախող արդիւնքները 4 - 1 արդիւնքով պարտութեան մատնուեցան: Ահլին գիշեցաւ Յըթինէն, իսկ Հուրիէն՝ Ուասպէն: Սուրիոյ ախոյեան Ֆըթուլէն 3 - 0 արդիւնքով յաղթեց Թալիաին, իսկ Ճապլէն 1 - 0 արդիւնքով՝ Թըշրիին: Դամասկոսի Ուահտէն եւս շարունակելով իր ձախողութիւնները, այս անգամ գիշեցաւ Սահէլին՝ կրելով 2 - 0 արդիւնքով պարտութիւն:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԳՈՐԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ՝ ԾԱՆՐԱՍՄՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ

Մեքսիքայի Գուաթալաիարա քաղաքին մէջ ընթացող ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնութեան, Հայաստան նուաճեց հերթական իր մետալը: Տղոց 102 քկ. ծանրութեան մրցումին, հայ մարզիկ



Գարիկ Կարապետեան երկամարտին ցոյց տուաւ 378 քկ. արդիւնք եւ գրաւեց առաջին տեղը՝ ախոյեան հռչակուելով: Ան ոսկի մետալներ նուաճեց նաեւ պոկում (175 քկ.) եւ հրում (203 քկ.) վարժութիւններուն:

Այսպիսով, Հայաստանի հաւաքականը աւարտեց աշխարհի առաջնութեան իր ելոյթները: Հայ ծանրորդները ընդհանուր առմամբ նուաճեցին 9 մետալ՝ 7 ոսկի, մէկ արծաթ ու մէկ պրոնզ: Երկամարտին վաստակուած 3 ոսկի մետալով Հայաստան գրաւեց առաջին հորիզոնականը: Անոր յաջորդեցին Ամերիկան եւ Ուքրանիան:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 466)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլքօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1								■				
2		■		■	■	■				■		■
3			■									
4										■		
5			■				■					
6								■				
7			■						■			
8	■			■	■	■				■		■
9										■		
10		■		■			■	■	■			
11					■							■
12												

Հորիզոնական

- 1- Հնակարկատ: Իբր, նման:
- 2- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
- 3- Հակառակ՝ 206: Կոնք: Հակառակ՝ 409:
- 4- Որոգայթ լարող: Աղբիւր:
- 5- Քէն: Մայրիկ պտուղ: Հակառակ՝ 660: Հակառակ՝ աչք:
- 6- Յանդուզ, խիզախ: Ծանրութեան միաւոր:
- 7- Կրկնուած բաղաձայններ: Հարց: Էական բայ:
- 8- Տարի: Հակառակ՝ 7400:
- 9- Թաքուն պայթուցիկ: Մեծ, աւագ: Յուցական դերանուն:
- 10- Հակառակ՝ որովիտեւ: Հալեպէն սփռուող համացանցային ռատո:
- 11- Հաց: Ծննդավայր:
- 12- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Գոյութեան վտանգը ո՛չ թէ հայութեան այս կամ այն դասակարգին էր պատկանում, այլ ընդհանրութեան»:


Ուղղահայեաց

- 1- Ոյժ, գորութիւն: Ս. Կոյս Մարիամի մայրը:
 - 2- Մանելու ջահրակ: Հակառակ՝ 5060:
 - 3- Տառի մը անունը: Կիլիկիոյ քաղաքներէն:
 - 4- Հակառակ՝ մտածել: Հակառակ՝ անձնական դերանուն:
 - 5- Հռչակ, համբաւ:
 - 6- Հակառակ՝ փոքր դուռ: Հովասուն:
 - 7- Հուր: Զուն: Նմանաձայն տառեր:
 - 8- Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրը: Հակառակ՝ հարցական դերանուն:
- Ձայնաւոր տառեր:
- 9- Միայն: Տաքութիւն:
 - 10- Սուրիահայ գրողներու տարեգիրք: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ ժողովրդական լեզուով սիրելի անձ:
 - 11- Աստուածային: Սուրիական լրատու գործակալութիւն:
 - 12- «Ոտքի Կանգնելուը. Ինքնաճանաչում» անունով ֆիլմը: Հակառակ՝ տառի մը անունը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 465)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ս	պ	ա	ր	ա	պ	ե	տ		հ	ա	կ
2	պ	ի	տ	ա	ն	ի				խ	ն	կ
3	ա	ր	ա	գ	ա	ծ		հ	ն	ւ	ն	տ
4	ն	կ	դ		կ	ա	ն	ա		մ	ա	կ
5	դ		ձ	ա		կ	ն	մ	ա		ձ	ա
6					ն	ն			տ		ա	ր
7	գ	գ	ա	ս	տ	ւ	թ	ի	ւ	ն		
8	ա		ա	ա	ր			ա	պ		ր	է
9	ր	ւ		լ		տ	ա	դ	է	լ		
10	մ	ա	տ		ն	չ		ա	լ	թ	ա	
11	ի	հ	ա	յ	ն	ա	ն	է	լ	թ		
12	կ	ա	պ	ն	յ	ա		թ	է	լ	ի	

ԼՈՒՐԻՆ



ՀՕՄ-Ը ՄԻՇՏ ՆԵՐԿԱՅ

Շաբաթ, 18 Նոյեմբեր 2023-ին Երեւանի «Արամ Մանուկեան» կեդրոնի սրահին մեջ տեղի ունեցավ ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչության կազմակերպած գեկուցական ժողովը՝ մասնակցութեամբ ՀՕՄ-ի նորընտիր Կեդրոնական վարչութեան անդամ Չոյա Զոչարեանի եւ տարբեր մարզերէ կազմ մեծ թիւով ՀՕՄ-ուհիներու:

Ժողովը սկսաւ Հայաստանի, Արցախի եւ ՀՕՄ-ի քայլերդներու ունկնդրութեամբ, որմէ ետք ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութեան

ձը յաջողութեամբ կատարելէ ետք շրջանի ՀՕՄ-ը՝ համագործակցութեամբ ՀՍԸՄ-ՀԱՍԿ-ի Կեդրոնական վարչութեան, աւելի քան հարիւր արկղ սննդամթերք, հագուստ եւ մաքրութեան առնչուող իրեր տարին Գորիս եւ բաժնեցին այնտեղ հանգրուանած արցախահայութեան:

Այնուհետեւ, ՀՕՄ-ը ընդարձակելով օգնութեան իր շրջանակը եւ համագործակցելով շրջանի ուղեկից կազմակերպութիւններուն եւ արտասահմանեան զանազան երկրներէ կամաւորաբար հայրենիք



եան ատենապետուհի Մարո Զեչիշեան բարի գալուստի քաջալերական խօսքէն ետք գեկուցեց ՀՕՄ-ի Համահայկական 73-րդ Պատգամաւորական ժողովի արդիւնքներուն մասին՝ անդրադառնալով անոր

կիրներէ կամաւորաբար հայրենիք եկած հայորդիներուն հետ, աւելի քան հազար արկղ սնունդ եւ մաքրութեան առնչուող ապրանքներ պատրաստեց եւ բաժնեց հայրենի տարբեր մարզերու մէջ հաստատուած արցախցիներուն:

Այս աշխատանքներուն զուգահեռ, ամէնօրեայ յաճախականութեամբ ՀՕՄ-ի կեդրոն կ'այցելեն հարիւրաւոր անձնագրի հայեր եւ իրենց օգնութիւնը կ'առաջարկեն ՀՕՄ-ին, կ'այցելեն արցախցիներու տուններ եւ օգտակար կը հանդիսանան անոնց նիւթապէս եւ կը տրամադրեն սնունդ, հագուստ, անկողնային եւ խոհանոցային իրեր:

2023 թուականի Հոկտեմբեր 16-21 Հայաստանի մէջ գումարուած ՀՕՄ-ի Համահայկական 73-րդ Պատգամաւորական ժողովի մասնակից պատգամաւորները եւս մեծապէս օգտակար հանդիսացան արցախահայութեան: Անոնք եւս այցելեցին եւ իրենց օգնութեան ձեռքը մեկնեցին արցախցի իրենց հայրենակիցներուն:

Բռնագաղթուած արցախահայութեան օժանդակութեան աշխատանքները առաւել կազմակերպուած կատարելու հեռանկարով ստեղծուած է կեդրոնական յանձնախումբ, որուն ծրագրային աշխատանքներուն մէջ ներառուած են կարճաժամկետ եւ երկարաժամկետ ծրագիրներ:

Կարճաժամկետ ծրագիրներու առաջնահերթութիւնը սնունդի բաժանումն է, որուն համար ՀՕՄ-ը շաբաթներ շարունակ արձանագրութիւններ կատարեց, որպէսզի բաժանումը կանոնաւոր կատարուի: Ներկայ դրութեամբ աւելի քան հինգ հազար ընտանիք արձանագրուած է: Այս ծրագրի ծիրին մէջ ՀՕՄ-ի հետ համագործակցած է «Մենք ենք մեր

սարերը» հասարակական կազմակերպութիւնը՝ քսան հազար թոն դրոմաճեղէն, Լիւտա Հաննան՝ երկու թոն խնձոր նուիրելով: Նկատի ունենալով, որ ՀՕՄ-ի օգնութեան դաշտը շատ ընդարձակուած է, ինչպէս նաեւ ակնարկուած հինգ հազար ընտանիքներուն համար սնունդի օժանդակութիւնը կազմակերպելը եւ արագ հասցնելու կարեւորութիւնը էական է, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութիւնը ժամանակաւորապէս դադարեցուցած է արցախցիներու արձանագրութիւնները: Արձանագրումներու նոր թուականը պիտի յայտարարուի ՀՕՄ-ի Դիմատետրի էջին միջոցով:

Երկարաժամկետ ծրագիրներու մասով յանձնախումբը ծրագրած է բաւալ Ընկերային ծառայութեան կեդրոն, մատուցել հոգեբանական ծառայութիւն եւ բժշկական ծառայութիւն (Մօր ու մանկան ծննդատան օրինակով): Այս ծրագիրներու իրականացումը ուսումնասիրութեան փուլի մէջ է, եւ միջոցներ կ'որոնուին զանոնք լաւագոյնս նախաձեռնելու համար:

Իսկ կրթական-մշակութային աշխատանքները արդէն իսկ նախաձեռնուած են Համագոյնի եւ սկսուած է Երիտասարդական ՀՍԸՄ-ՀԱՍԿ) ճամբարներու միջոցով:

Պետք է ընդգծել, որ ՀՕՄ-ի մար-

դասիրական այս ծրագիրներուն մէջ մեծ է ներդրումը ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութեան գրասենեակին եւ մասնաճիւղերուն, որոնք ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան ընդհանրական աշխատանքներուն (սնունդի արկղեր պատրաստել, բաժնեց) մասնակցութիւն ունենալու զուգահեռ, առանձին օգնութիւններ կը ծրագրեն եւ կը տրամադրեն իրենց շրջապատին մէջ ժամանակաւոր բնակութիւն հաստատած արցախահայութեան: Այս իմաստով առանձին ներկայացուցան ՀՕՄ-ի գրասենեակի եւ մասնաճիւղերու հարիւրաւոր ընտանիքներուն մատուցուած տարաբնոյթ օգնութիւնները:

Ժողովի վերջին բաժինին մէջ իր սրտի խօսքը արտասանեց եւ ՀՕՄ-ի Արցախի միաւորին անունով շնորհակալութիւն յայտնեց ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսեանը: Ան իր գոհունակութիւնը յայտնեց ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերուն, որոնք գրկաբաց ընդունեցին եւ օժանդակեցին արցախահայութեան:

Արդիւնաւետ այս գեկուցեց ետք լուսաբանական հարցումներու առիթ տրուեցաւ: Ներկաները մեծ գոհունակութեամբ հրաժեշտ տուին՝ իրենց օգնութիւնը աւելի ընդարձակ եւ ոգեւորութեամբ շարունակելու պատրաստակամութեամբ:

ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆԴ ...

Սկիզբ՝ էջ 4

լսել ըսուած խօսքը, իսկ միւսը՝ Նոյնիսկ անհամաձայն ըսուածին, կը լսէ ըսուածը եւ լուռ կը մնայ: Խօսելու պարագային իսկ, այս վերջին խումբին պատկանողներ մեղմ ձայնով կ'արտայայտուին, առանց շեշտելու իրենց տեսակետը: Դիմացիւնը ճանչնալու շնորհքն է այս, որմէ զուրկ են ոմանք:

Իրենց տեսակետներուն վրայ պնդող մարդիկ բնաւ չեն կրնար նոր սկիզբ մը, կամ նոր որակ մը տալ իրենց կեանքին: Իրենց իմացածին ինքնավստահ ողորմելիներն են ասոնք, որոնք միտքը փակուած եւ ապագայի հայեացքը կարճատես դարձած է:

Ե՞րբ կը հասունան մարդիկ:

Գլխաւոր հարցումը այս է: Պատանութեան տարիքին դաստիարակ ուսուցիչը հետեւած ըլլալով երեխայի զարգացման, իր կարծիքը կը յայտնէ: Սակայն կեանքի դպրոցին մէջ ո՞վ պիտի հաստատէ, որ այսինչ կամ այնինչ անձը արդէն հասունցած է: Դժուար է գտնել մէկը, որքան ալ հարագատ կամ մտերիմ ըլլայ ան, որ իր ծանօթ կամ բարեկամին հասունցած ըլլալը վճռէ: Ենթական արդէն որոշ տարիք ունենալով, կրնայ Նոյնիսկ վիրաւորուիլ նման հաստատումէ մը...: Ուրեմն, իւրաքանչիւր անձ ինք պիտի որոշէ, թէ հասունցած է կամ ոչ: Այս քննութիւնը անցնելու ձեւեր կան անշուշտ: Ամէն մարդ հոգեբանական վերլուծում կատարելու մասնագիտութիւն չունի, սակայն իւրաքանչիւր անձ ինքզինք լաւ ճանչնալով, գիտէ իր տկարութիւնները, բայց շատեր իրենց սեփական կարողութեանց մասին գաղափար չունին: Մէկը պետք է յիշեցում կատարէ, որպէսզի անդրադառնան, որ այս կամ այն կարողութեան տէրն են իրենք:


Այո՛, կան կարեւոր եւ երեւելի փաստեր, որոնք հասունցած ըլլալը բացայայտօրէն ցոյց կու տան: Անոնցմէ գլխաւորը այն է, որ սկսիս անդրադառնալ, որ երբեմն լուռ մնալով աւելի կարեւոր է, քան ընկերային շրջապատի մէջ պատահած այս կամ այն իրողութիւնը փաստելու ջանքը:

Նման հասունութիւն նաեւ պատճառ կը դառնայ, որ ուրիշներու մասին չարիք չխորհելու առաքինութիւնը որդեգրէ մարդ: Սակայն եթէ անոնք իսկապէս արժանի են պատիժի, աւելի լաւ է անոնց մասին բնաւ չմտածել...: Ահա՛ հասունցած ըլլալու բացայայտ գլխաւոր նշանը:

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Հայ Ծերանոցը կարիքը ունի մաքրութեան պաշտօնեայի, գիշերապահի եւ խոհարարապետի:

Յանելեալ մանրամասնութեան համար դիմել հետեւեալ թիւերուն՝ 4616168 - 0933 057818:



որդեգրած բանաձեւերուն, նորընտիր Կեդրոնական վարչութեան անուանացանկին եւ ապա կեդրոնացաւ հայրենագուրկ դարձած արցախահայութեան ցարդ տրամադրուած եւ մօտ ապագային տրամադրուելիք օժանդակութիւններուն:

Արցախահայերու օգնութեան հասնելու առաջին արձագանգը ստացուեցաւ ՀՕՄ-ի Աւստրալիոյ միաւորէն, որ տեղի պետական մարմիններու եւ Հայ Դատի յանձնախումբին համագործակցութեամբ հանգանակեցին 24 հազար ամերիկեան տոլար: ՀՕՄ-ի Հայաստանի միաւորի տնօրինութեամբ Արցախի ներկայացուցչութեան միջոցով արցախահայութեան տրամադրուեցան 440 արկղ սննդամթերք եւ մաքրութեան առնչուող ապրանքներ: Վերոնշեալ արկղերուն պատրաստութեան մասնակցեցան նաեւ Աւստրալիայէն Հայաստան եկած պետական պատուիրակութեան անդամները:

Օգնութեան առաջին այս փոր-